

# ՀԱՄՇԵՆՆԱԿԱՆ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Անվճար

1915թ. թուրքերի կողմից իրականացրած հայերի ցեղասպանությունը և թափված անմեղ զոհերի արյունը չհագեցրեց թուրքական անհագուրդ ծարավը: Հայերից ազատվելուց հետո քեմալական կառավարությունը ցանկացավ ազատվել նաև հույներից՝ այդ կերպ քրիստոնյա տարրից մաքրելով նաև Սև ծովի առափնյա շրջանը: 1922թ. մայիսի 19-ին թուրքական արյունոտ յաթաղանը դարձյալ մեկ հարվածով երբեմնի «Եվքսենիոս (հյուրընկալ) Պոնտոսը» վերածեց «սև ծովի», իսկ ծովի հյուրընկալ ավերը ողողվեցին անմեղ քրիստոնյաների՝ հույների և հայերի սպանված մարմիններով: Պոնտոսում ծավալված թուրքական հալածանքներին զոհ է գնացել գրեթե 350.000 հույն: Հրաշքով փրկվածները ապաստան են գտել Հունաստանում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Ամերիկայում և այլուր՝ հիմք դնելով պոստական համայնքների և միությունների:

Աշխարհով մեկ սփռված Պոնտոսի հույները ամեն տարի մայիսի 19-ին երթով, մոմավառությամբ և հոգեհանգստի արարողությամբ հիշում են ցեղասպանության անմեղ զոհ դարձած հայրենակիցների հիշատակը:

Հայաստանի հունական համայնքը ի դեմս Երևանի համայնքի ղեկավար Ֆրունտիկ Նիկոլայիդիսի և Հայաստանի հունական միության նախագահ Արկադի Խիտարովի մայիսի 18-ին և 19-ին Պոնտոսի հույների ցեղասպանությանը նվիրված միջոցառումներ էին կազմակերպել:

Մայիսի 18-ին Երևանի Գրիգոր Նարեկացի կենտրոնում տեղի ունեցավ

## Պոնտոսի հույների ցեղասպանության տարելիցը



«1922» ֆիլմի ցուցադրությունը՝ նվիրված 1922թ. օգոստոսին Իզմիրում (Չմյուռնիա) կազմակերպված հույների և հայերի ջարդերին և բռնի տեղահանություններին: Ֆիլմը նկարահանվել է Նիկոս Կունդու-

րուի կողմից 1978թ., սակայն պաշտոնական ցուցադրությունը եղել է 1981 թվականից: Ֆիլմը հունարենից հայերեն է թարգմանել Արսեն Նիկոլայիդիսը: Ցուցադրմանը ներկա էին Հայաստանում Հու-

նաստանի արտակարգ և լիազոր դեսպան Իոաննիս Տակիսը և դեսպանատան այլ հույն պաշտոնյաներ, Երևանի «Պոնտոս» հունական համայնքի ղեկավար և միջոցառման կազմակերպիչներ Ֆրունտիկ և Սուսաննա Նիկոլայիդիսները, ինչպես նաև համայնքի շատ անդամներ:

Մայիսի 19-ին տեղի ունեցավ երթ դեպի Ծիծեռնակաբերդ, որին մասնակցում էին Հայաստանի բոլոր համայնքների հույները, դարձյալ Հունաստանի դեսպանատան պաշտոնյա այրերը, ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը և այլ պաշտոնյաներ: Բոլորը ծաղիկներ դրեցին ցեղասպանության զոհերի հուշարձանին, որից հետո զոհերի հիշատակին կատարվեց հոգեհանգստյան պաշտոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Հովակիմ եպս. Մանուկյանի նախագահությամբ:

Ապա հայերի և հույների ցեղասպանությունը դատապարտող հայտարարություններով հանդես եկան Հայաստանում Հունաստանի Հանրապետության դեսպան Իոաննիս Տակիսը և ՀՀ ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը:

ՄԱՐԻԱՆՆԱ ԱՊՐԵՍՅԱՆ  
Պատմական գիտ. թեկնածու

## «Երկու ժողովուրդ, մեկ ճակատագիր. հույների ցեղասպանությունը (1914-1923 թթ.)» խորագրով սեմինարը՝ Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնում

Մայիսի 17-ին, Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնում կայացավ «Երկու ժողովուրդ, մեկ ճակատագիր. հույների ցեղասպանությունը (1914-1923 թթ.)» խորագրով սեմինարը՝ նվիրված Պոնտոսի հույների ցեղասպանության տարելիցի օրվան՝ մայիսի 19-ին: Սեմինարի բանախոսներն էին պատմական գիտ. թեկնածու, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ավագ գիտաշխատող Թեմիմե Մարտոյանը, ով դասախոսեց «Չուզահեռ ցեղասպանություն. հույն և հայ բնակչության ոչնչացման քաղաքականության իրադրությունը Զմյուռնիայում (1922թ. սեպտեմբեր)» թեմայով, և ՀՅԴ Հունաստանի «Հայ դատի» հանձնախմբի անդամ Հովիկ Քասաբյանը, ով խոսեց «Հայ դատի» հանձնախմբի համագործակցությունը պոնտոսի հույների կազմակերպությունների հետ. մտածումներ և մոտեցումներ» թեմայի շուրջ: Սեմինարին մասնակցեցին հունական համայնքի անդամներ, գիտնականներ, թուրքա-

գետներ, լրագրողներ, հունահայեր և ուսանողներ:

Սեմինարը մեկնարկեց Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտ. թեկնածու Հայկազուն Ավիլյանի բացման խոսքով, ով մասնավորապես նշեց, որ Պոնտոսի հույների ցեղասպանությունը բավականին ծանր երևույթ է հատկապես ցեղասպանություն ապրած ժողովուրդների համար: Ըստ Հ. Ավիլյանի՝ քանի դեռ չի ամփոփվել ցեղասպանության թողած սպին, և ժողովուրդը չի ստացել դրա հատուցումը, այն հետզհետե խորանալով՝ ավելի մեծ վերջ է դառնում: Մեր ժողովուրդները դեռ չեն կորցրել հավատը, որ կհասնեն հատուցման՝ քաղաքական պայքարի ճանապարհով: Առաջին բանախոսը՝ Գևորգ Վարդանյանը, ելույթում հայտնեց, որ մինչև ցեղասպանություն եզրի՝ գիտական շրջանառության մեջ մտնելը հույներն իրենց այս ողբերգությունն անվանել են «Մեծ աղետ», «Մեծ ողբերգություն», «կոտորած» և այլն: Ըստ բանախոսի՝ թեև հույների ցեղասպանությունն արդեն իսկ ճանաչվել է մի քանի պետությունների և միջազգային կառույցների կողմից, այնուամենայնիվ, այս ցեղասպանությունը դեռ նոր է մտել միջազգային ասպարեզ՝

ինչպես ճանաչման, այնպես էլ գիտական ուսումնասիրության առումով: Հույների ցեղասպանությունը, ըստ բանախոսի, հարաբերականորեն բաժանվում է մի քանի փուլերի: Առաջին փուլը, թերևս, 1913-14 թվականներն են, երբ սկսվեցին հույների առաջին զանգվածային տեղահանությունները: Երկրորդ փուլ կարելի է համարել Առաջին աշխարհամարտի տարիները՝ 1914-18 թվականները, իսկ երրորդը՝ 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմի տարիները: 1908 թ. երիտթուրքերի հեղաշրջումից հետո ինչպես արևմտահայությունը, այնպես էլ հույները որոշակի հույներ էին փայայում իրենց դրության բարելավման առումով, սակայն վրա հասան Բալկանյան պատերազմները (1912-13 թթ.), որոնք լավ հնարավորություն էին՝ փորձարկելու Միություն և առաջադիմություն կուսակցության սալոնիկյան զույգ՝ երրորդ և չորրորդ համազումարների որոշումները, ըստ որոնց՝ երկու ժողովուրդների ճակատագրի նկատմամբ որդեգրվել էր միասնական նպատակ՝ բռնի օսմանացում կամ թուրքացում: Ինչպես նշեց բանախոսը, արդեն երկրորդ Բալկանյան պատերազմից սկսվեցին և հատկապես 1914 թ. գարնանը մեծ ծավալով շարունակվեցին հույների առաջին

զանգվածային տեղահանությունը և առանձին կոտորածները: Խոսքը վերաբերում է Արևմտյան Փոքր Ասիայի, Էգեյան ծովափի և, իհարկե, Արևելյան Թրակիայի հույն բնակչության արտաքսմանը: Ըստ նրա, Կոնստանդնուպոլիսի հունական տիեզերական պատրիարքարանի տվյալների համաձայն, այս քաղաքականության հետևանքով բռնազաղթվեց մոտ 280 հազար մարդ: Առաջին աշխարհամարտի տարիներին հակահունական քաղաքականությունն ավելի համակարգվեց: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում բուռն թափով իրականացվեցին հույների տեղահանություններ ու կոտորածներ: 1913-ից մինչև 1918 թվականի վերջը տեղահանվեց մոտ 774 հազար հույն: Գ. Վարդանյանի կարծիքով՝ Մուդրոսի գինադադարի կնքումն ամենևին էլ չդադարեցրեց հույների դեմ ուղղված հալածանքները: Չինադադարի կնքումից կարճ ժամանակ անց սկսեցին ձևավորվել, այսպես կոչված, թուրքական ինքնապաշտպանական խմբեր, որոնց հիմնական նպատակը պայքարն էր՝ ընդդեմ հույների և հայերի:

Շարունակությունը՝ 2-րդ էջում:

Սկիզբը՝ 1-ին էջում:

1919 թ. մայիսին, երբ սկսվեց հույն-թուրքական պատերազմը, հակահունական այս արշավն ավելի համակարգեց: Ընդհանրապես 1919-22 թվականները խորհրդանշական են այն առումով, որ այս տարիներին առավել մեծ ծավալով շարունակվեցին հույների հալածանքները, և Պոնտոսում այս մի քանի տարիների ընթացքում տեղահանությունների, կոտորածների և բռնությունների հետևանքով թուրքական դաժանություններին զոհ գնաց շուրջ 350-353 հազար հույն: Բանախոսը նաև անդրադարձավ, այսպես կոչված, "Բնակչության փոխանակման մասին" պայմանագրին՝ կնքված Թուրքիայի և Հունաստանի միջև: Գ. Վարդանյանի դիտարկմամբ՝ այս պայմանագրով մինչ այդ տեղի ունեցած հույների բոլոր տեղահանությունները համարվում էին փոխանակում: Ինչպես շեշտեց բանախոսը, Լոզանում հունական պատվիրակության ղեկավար, Հունաստանի վարչապետ Վեմիզեյոսը ժամանակին ասել է, որ թերևս ճիշտ կլիներ այս պայմանագիրն անվանել ոչ թե «բնակչության փոխանակման», այլ՝ «Թուրքիայից հույն բնակչության վտարման պայմանագիր»:

Երկրորդ բանախոսը՝ Թեմիսնե Մարտոյանը, Ջնյունիայի 1922 թ. սեպտեմբերին տեղի ունեցած հայ և հույն բնակչության ոչնչացման քաղաքականության իրագործման թեման կարևորեց հատկապես այն հանգամանքով, որ այն հանդիսանում է ոչ միայն հայոց, այլ նաև՝ հունաց ցեղասպանությունների ավարտն ազդարարող գործողությունների մի ամբողջ ծրագիր:

Երրորդ բանախոսը՝ Հովիկ Քասաբյանը, անդրադարձավ այն հարցին, թե պոնտական հարցն անխտիր բոլոր հույներին է վերաբերվում, թե՞ միայն պոնտոսից հույներին, և ո՞րն է հունական հարցի բովանդակությունը: Նա շեշտեց, որ այսօր պաշտոնապես Հունաստանի և Թուրքիայի միջև ոչ մի ազգային խնդիր չկա՝ բացառությամբ մեկ հարցի: 1970-ական թվականների կեսերից ի վեր միակ խնդիրը, որ առկա է այս երկրների միջև այն հարցն է, թե որտեղից են սկսվում Հունաստանի և Թուրքիայի միջև սահմանները՝ էգեյան ծովի վրա: Այսօր Հունաստանը, իբր պետություն, որևէ այլ խնդիր չունի Թուրքիայի հետ: Ըստ բանախոսի, մնացյալ խնդիրները պարզապես «դիվանագիտական սեթևեթանք» են: Հ. Քասաբյանի խոսքով, վերջին տասնամյակում պոնտոսիցները, անդրադառնալով Հայկական հարցին, մոտեցան Հունաստանում Հայ դատի հանձնախմբին և ունեցան որոշ հանդիպումներ: Նրանց հուզում էր այն հարցը, թե ինչպես հայերը կարողացան Հայկական հարցն արժարժել համայն աշխարհում: Եվ եթե անգամ եղան երկրներ, որոնք չընդունեցին Հայոց ցեղասպանությունը, այնուամենայնիվ աղմուկը միշտ կա՝ ի տարբերություն պոնտական հարցի: Ինչպես նշեց բանախոսը, իր պատասխանը եղել է հետևյալը. «1965 թ., երբ սկսվեց Հայ դատի պայքարը, հայերը չունեին պետություն, սակայն միջուկը մնաց այն ստացավ լայնածավալ արձագանք»: Հ. Քասաբյանը նաև կարևորեց հետևյալ խնդիրը. պոնտոսիցների ցեղասպանության հարցն այսօր գաղափարական հիմք ունի, թե՞ ոչ: Ըստ նրա՝ պոնտոսիցների ցեղասպանության հարցը գաղափարական հիմքի պակաս է զգում, քանի որ սահմանված է կոնկրետ պահանջատիրություն: Հ. Քասաբյանը նաև անդրադարձավ Հայաստանի կողմից հույների ցեղասպանության պաշտոնապես ճանաչման հարցին՝ նշելով, որ Հունաստանն ինքը տվյալ պահին ողջունելի չի համարել այդ քայլը: Բանախոսը շեշտեց, թե իր ցանկությունն է, որ պոնտոսիցի հույների կազմակերպությունները Հայ դատի հանձնախմբերի հետ համագործակցեն կոնկրետ ծրագրի համաձայն:

Տպագր. է կրճատումներով  
Պատմական գիտ. թեկնածու  
ՄԵԼԻՆԵ ԱՆՈՒՄՅԱՆ  
Akunq.net

# Համշենի բարբառի նպաստը ընդհանուր հայերենին

Հ նպաստ ընդհանուր ազգային լեզվի բարբառների ունեցած արժեքավոր դերի մասին շատ է գրվել թե հայոց լեզվի, թե այլ լեզուների կապակցությամբ: Թերևս գրական լեզվի բացատրական բառարանին հավասար արժեք են ներկայացնում տվյալ լեզվի բարբառային բառարանները և, ուր ներկայացվում են ընդհանուր հասկանալի բառերից դուրս, միայն որևէ բարբառում գործածվող անծանոթ բառերը: Նման միայն մեկ կամ երկու բարբառներում գործածվող եզակի բառերը խիստ արժեքավոր են այն տեսակետից հատկապես, եթե գրաբարյան մատենագրությամբ չեն ավանդվել: Վերջերս լույս տեսավ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած «Հայոց լեզվի բարբառային բառարանի» վերջին 6-րդ հատորը, որը հնարավորություն տվեց ընթերցող լայն զանգվածներին օգտվելու իր հսկայածավալ բառապաշարի օվկիանոսից: Այսուհետ յուրաքանչյուր ընթերցող, եթե դժվարամատուց բարբառով գրված հեքիաթ է կարդում կամ հանդիպել է անծանոթ բարբառային մի արտահայտության, այս բառարանի շնորհիվ կտանի իրեն հետաքրքրող բառի բացատրությունը և որոնումներ չի կատարի այլուրեք:

Մենք այսօր ընթերցողներին կփորձենք ներկայացնել մեր դժվարամատուց բարբառներից մեկի այն բառազանձը, որն այլ բարբառներով և գրաբարյան մատենագրությամբ չի ավանդվել և նրա բառապաշարի ու բանախոսության շնորհիվ ազգային լեզվի հարստությունը հասել է մեզ: Ահա թե ինչ է գրել հայ մեծ լեզվաբան Հ. Աճառյանը այդ բարբառի մասին, որը ուսումնասիրել է ինքը. «Հարուստ է գրաբարի այնպիսի հազվագյուտ բառերով, որ ոչ մի բարբառի մեջ կարելի չէ գտնել» (Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947, էջ 12): Այս շարունակում է. «Սակայն համշենցոց բարբառի ամենահետաքրքրական բառերը նրանք են, որոնց ծագումը ոչ հայերեն է, ոչ թուրքերեն, ոչ հունարեն, այլ մի անծանոթ լեզվով: Այս անծանոթ լեզվի բառերը պետք է կարծել թե մնացորդ են հին պոնտական լեզվից, որ վաղուց է կորած» (նույն տեղում, էջ 191-192):

Իհարկե, մեծ լեզվաբանի ենթադրությունը մասամբ կարող է ճիշտ լինել, սակայն դժվար է դա ստուգելը, քանի որ այդ կորած լեզվի բառապաշարը մեզ չի հասել: Այնուամենայնիվ նա հույս է հայտնում, որ «Այս կարգի բառերի մանրամասն քննությունը կարող է գեղեցիկ հայտնություններ բաց անել մեր առաջ» (նույն տեղում, էջ 192):

Միաժամանակ նա ընդգծում է Համշենի բարբառի բառապաշարի հարստությունը, որ կարող է իր նպաստը բերել ընդհանուր հայերենին:

Մանավանդ շատ լեզվաբաններ են անդրադարձել այն հարցին, որ գրաբարյան մատենագրությամբ մեզ չավանդված բառերի մի մասը պահպանվում է բարբառներում: Այսպիսի բարբառներից մեկն է Համշենի բարբառը:

Գրաբարով չավանդված, սակայն բարբառներում պահպանված հայերենի բառազանձին դատուկ անդրադարձել է Գ. Զահուկյանը իր «Հայ բարբառագիտության ներածություն» գրքում (Երևան, 1972):

Համշենի բարբառի խոսվածքների հնչյունական տարբերությունների մասին Հ. Աճառյանը հետևյալ պատճառներն է հիշեցնում. «Այսպես ընդարձակ, ավելի ճիշտ ցրված մի բարբառ, որ ճորոխի ավերից զնուն հանում է մինչև Մարմարայի ավից, այսինքն 1000 կիլոմետր տարածություն ունի, չէր կարող պահած լինել սկզբնական արդյուրի նույնությունը» (Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 14): Իսկապես, երբեմն հարկ է լինում ամեն մի տեղանվան, ամեն մի բառի համար սահմանել

հնչյունափոխությունների տարբերություններ: Այնուամենայնիվ Համշենի բարբառի նպաստը ընդհանուր հայերենի համար զգալի է: Ստորև կբերենք միայն այս բարբառով վկայված բառազանձից մեծերը.

ա) Օնլուք<անալուք «եղնիկ» բառը չի պահպանվել ոչ մի հայերենի բարբառում (միայն գտնում ենք Աստվածաշնչի թարգմանության մեջ (Օրին. Ժդ 5) և «Աշխարհացույցում»: Գուգարաց աշխարհի բարիքները թվարկելիս գրված է. «Լինի ի նմա անալուք, եւ հաճարածառ, եւ սերկելի եւ տաւսախ» (Երեմյան Ա., «Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի», Երևան, 1963, էջ 110): Հ. Աճառյանը ՀԱԲ-ում անալուք բացատրում է ընծուղտ, սակայն, ի վերջո ուղղում է իր սխալը. «Համշենի օնլուք «եղնիկ» այս հազվագյուտ բառը ցույց է տալիս, որ զանալուք պարզապես սխալմունք է» (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 179): Հայցական ձևն է: Այս հազվագյուտ բառը սեմական հին փոխառություններից է, որ գտնում ենք նաև աքքադերենի բառապաշարում, ինչպես նշել ենք մեր գրքում (Մ. Մկրտչյան, Семитские языки и армянский, Ереван, 2005, с. 257-258): Համշենի բարբառի օգնությամբ ճշտվում է սխալը:

Օնլուք բառը եղնիկ իմաստով պահպանվել է նաև կրոնափոխ համշենահայերի մոտ (Ս. Վարդանյան, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, Բանասիրությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Երևան, 2009, էջ 330):

բ) Կորոպ, կոռոպ (նաև գորոք), կորոպը նույնպես վկայված է միայն Համշենի բարբառում. այն որոշ մասնագետներ բացատրում են. «Եգիպտացորենի համար պահեստ», պարզապես պահոց, ամբար (մրգերը, կարկինը, ընկույզը, եգիպտացորենը պահելու համար): Այն վկայված է նաև աքքադերենում kurrup, bit kurrup ձևով (Von Sodon, A Hw, 513), (Մ. Մկրտչյան, Семитские языки и армянский, с. 229): Համշենի բարբառից անցել է նաև թուրքերենի բարբառներին, Ռիզայե, Իքիզդերեն, Շիմշիրի Korob ձևով (Ս. Սկրտչյան, Հայերենից փոխառյալ բառեր թուրքերենի բարբառներում, էջ 135, 205, 272):

Ոմանք կարող են առարկել, թե կորոպ բառը Համշենի բարբառի մենաշնորհ չէ, քանի որ առկա է նաև Նիկոմեդիայի գավառի Պարտիզակ բնակավայրում: Բայց նրա բնակիչները բռնի իսլամացումից փախած համշենցիներն են, որոնք էլ բերել են իրենց հետ կորոպը: Լսենք Հ. Աճառյանին. «Փայսատական համշենցիները անցան Տրապիզոնի մոտակա գյուղերը, Խուրշունլի, Գարա Տեղի և Սիւրմէնէի գավառները և ... մինչև Նիկոմեդիա» (Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, էջ 5):

Համշենցիների Նիկոմեդիո գավառում հաստատվելու մասին գրում է նաև Մինաս Գ. Գասապյանը (Ֆարհատ) իր «Հայերը Նիկոմեդիո գավառին մեջ» գրքում (Պարտիզակ, 1913, էջ 81-100, 144-145):

Այս պատճառով է, որ կորոպը «Հայերեն բարբառային բառարանում» նշվում է որպես Պարտիզակի բառապաշարի բառերից (հ. Գ, Երևան, 2004, էջ 162): Կորոպի (գօօք) մասին տես նաև Ս. Վարդանյան, նույն տեղում, էջ 283, 366:

գ) Դվիին>Տըլպին «Բարբառը շատ հարազատությամբ պահում է իին հայոց բառական հարստությունը, այլև այն, որ հյ. դվիին բառը, որ հունարեն փոխառություն է, կատարված է ոչ թե սոսկ գրքերի և ուսումնականների միջոցով, այլ իսկական, հարազատ ժողովրդական փոխառություն է» (Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, էջ 13):

դ) Հօրու «խորք հայր», մօրու «խորք մայր», այլ բարբառներ չգիտեն:

ե) Սնարք «բարձ», նույնպես այլ բարբառներ չգիտեն:

զ) Փնել «բնական կարիքը հոգալ», փին «թրիք» կղանք արմատից (մեծերի մասին): ՀԱԲ հ. 4, Երևան, 1979, էջ 504:

է) Նստիչ «աթոռ», միստ արմատից իչ ածանցով:

ը) Մաշմուրկ «մաշկամիրգ», «շագանակ» (մաշկ և միրգ բառերից), տես Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, էջ 244, Ս. Վարդանյան, նույն տեղում, էջ 304:

թ) Հետիք «ձյան վրա քայլելու հարմարանք»: Ուրիշ բարբառներում չկա այս բառը, մեկ էլ Բողազլյանի (Գամիթի) բարբառը գիտե: R. Dankof-ը նշում է, որ հայերեն այս բառը փոխ են առել Օրդուի, Ռիզեի, Տրապիզոնի, Էրզինջանի, Էրզրումի, Դերսիմի, Մուշի թուրքերը: (Տես R. Dankof, Armenian Lounwords in Turkish, Wiesbaden, 1995, 91-92: Ն. Սկրտչյան, Հայերենից փոխառյալ բառեր թուրքերենի բարբառներում, Երևան, 2007, էջ 142-143): Տես նաև Լ. Սահակյան, Համշենի մանրատեղանունները, 2012, լուսանկարների բաժին:

ժ) Օղ «բլուր» բառը հանդիպում է մանրատեղանուններում, ինչպես օրինակ բախենուղ=բարխ+ուղ «ժայռոտ բլուր», Մամինուղ՝ մեծ մոր բլուր, որոնք նշում է Լ. Սահակյան իր «Համշենի մանրատեղանունները» գրքում, էջ 50, 51:

Հ. Աճառյանը բխեցնում է գրաբարյան էջը, օղը «երկարանիստ բլրակ» բառից, բայց ստուգաբանությունը թերևս հուսալի չէ: Սեռական հոլով օղն, հոգն օղնունկ: (Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 12, 248, տես նաև Ս. Վարդանյան, նույն տեղում, էջ 329):

ժա) Չախչախ «ջրվեժ», չախչախան, ջրվեժ իմաստով գիտե միայն Համշենը:

Բնածայնական չախչախ բառը, որ գիտեն բազմաթիվ բարբառներ որպես ջրաղացի աղմուկ սարք, որ ցնցումներով կարգավորում է հատիկների հոսքը դեպի ջրաղաց քար: (Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Դ, Երևան, 2007, էջ 371-372):

Սակայն միայն Համշենի բարբառում է ստացել այն «ջրվեժ» նշանակությունը: Ազգությամբ լազ Օզթուրքը, որ զբաղվում է Ռիզեի և շրջակա տարածքների տեղանուններով, գրի է առել նաև չաքչաք-cakcak և camcaka չաքչաքան տարբերակներ՝ նույնպես «ջրվեժ» նշանակությամբ (Լ. Սահակյան, նույն տեղում, էջ 46):

ժբ) Սանտրիկ «հոպոպ» թռչունը, գլխի սանրածև փուփուկի համար կոչվել է այդպես, սանր/սանտր արմատից+իկ ածանցով:

ժգ) Փուռնիստ «փուռնի մեջ եփած հաց», այսինքն՝ փուռը նետված:

ժդ) Հայսդիր «խմորի մեծ տաշտ» հայս դնելու աման, ՀԱԲ, հ. 3, Երևան, 1977, էջ 31:

ժե) Գիվ «ծամոն», Հ. Աճառյանը նշում է նաև կիվ տարբերակը (էջ 238), տես նաև Ս. Վարդանյան, նույն տեղում, էջ 281:

ժզ) Վառեցուկ «կծու, այրող» (Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 254, Ս. Վարդանյան, նույն տեղում, էջ 319):

ժլ) Պոզիկ «փոքրիկ երեխա» (Համշեն) «փոքրիկ աղջիկ 1-4 տարեկան» (Տրապիզոն):

ժը) Տալայր «հորաքույր այր», «մորաքույր այր»:

Համշենի բարբառում միայն պահպանված այս 18 հայերեն բառերի օգնությամբ մենք ցույց տվինք, որ բարբառները իրենց հարուստ բառապաշարում հայերենի եզակի նմուշներ են հասցրել մինչև մեր օրերը՝ որոնք չեն ավանդված մեր հարուստ մատենագրությամբ:

ՆԵՐՍԵՍ ՄԿՐՏՉՅԱՆ  
Բանասիրական գիտ. դոկտոր,



Նաիրա Կիլիջյան Արվեստագիտության թեկնածու

# Հայկական Յեդ ու առաջ պարի հունական զուգահեռը

նակցությունն ավելի ուշ շրջանի արտահայտություն է: Նշվում է նաև, որ պարել են հատուկ օրերի և միայն ծածկի տակ՝ շինություններում: Ավելի ուշ շրջանի նյութերը վկայում են պարի կատարումը հարսանիքների հասարակական պարերին, բայց ոչ ծեսերին, նաև Ջատկին և այլ տոնախմբություններին:

Յեդ ու առաջ պարի երաժշտական չափը 9/8 է: Չեռքերը բռնում են ավերով կամ ձկույթներից, արմունկները սուր անկյանք դեպի վեր ու առաջ ծալած, դաստակները ուսերի մակարդակին:

Յեդ ու առաջի ամենապարզ ձևը հետևյալն է. 1-ին՝ աջ ոտքով քայլ առաջ, 2-ին՝ ձախ ոտքի մատներով թույլ զարկել աջի մատների մոտ, 3-ին՝ ձախ ոտքով քայլ ետ, 4-ին՝ աջ ոտքի մատներով թույլ զարկել ձախի մատների մոտ: Այս քայլերին այլ տարբերակներում ավելանում են դեպի աջ և ձախ գնացող քայլերը և Յեդ ու առաջի պարածեղ բարդանում է:

Այս տեսակի պարերն անվանում են Յեդ ու առաջ, չնայած իրականում դրանց հիմնական բնորոշ պարային քայլը կատարվում է առաջ ու ետ և ոչ թե ետ ու առաջ:

Մշակույթի պատմության դեռևս արխայիկ շրջաններից հայտնի է, որ ծիսա-հմայական գործողությունների ժամանակ շրջանը դիտվել է որպես սրբազան տարածք, չարի ազդեցությունից սահմանազատվելու, պաշտպանվելու միջոց: Վաղեմի այս պատկերացումը նույնանում է պարի շրջանի հետ, որն ըստ ժողովրդական մտածելակերպի ընդգրկում է նաև այլ հարթություն նմանեցնելով պարի շրջանը կյանքի շրջանին: Ըստ այդմ էլ շուրջպարի ժամանակ որոշակի նշանակություն է ունեցել պարի կատարման ուղղությունը, կյանքի շրջանին համընթաց կամ հակառակ պարելու սովորույթը: Բացի շրջանի աջ կամ ձախ ուղղությամբ պարելուց կա նաև պարի այլ ուղղություն, այսինքն դեպի շրջանի ներս և դուրս: Ըստ բանասացների, եթե դեպի շրջանի ներս պարելը խորհրդանշել է գնալ դեպի դրական հմայության կենտրոնը, դեպի կյանքը, այսինքն առաջ, ապա շրջանից ետ գնալը, նահանջ կյանքից դեպի անորոշ տարածություն, անդրաշխարհ: Այս առումով, սովորաբար, ժողովրդական պարերին այնքան էլ բնորոշ չեն շրջանագծից ետ կատարվող պարաքայլերը և այս դեպքում էլ դրանք կատարվում են մեկ առաջ, մեկ ետ կամ երկու առաջ, մեկ ետ, ընդգծելով տատանումը, իրավիճակի անորոշությունը, բայց, այնուամենայնիվ, պահպանելով հավասարակշռությունը, ինչպես որ կյանքն է: Նահանջ առաջխաղացումից հետո, անցում դեպի առաջ և ետ, նորից դեպի սրբազան շրջանագիծը, որից դուրս գալն արգելք է:

Մարի մասին հիշատակություններ կան Թիֆլիսի Հայոց Ազգագրական ընկերության կազմակերպած պարահանդեսների ծրագրերում, ուր այն պարել են հայկական Քոչարի, Վերվերի, Չամպար, Ղարսա պար, Փափուրի և այլ պարերի շարքում:

Յեդ ու առաջ պարի մասին, որպես հայկական շուրջպար, հիշատակվում է նաև բանավահաք Ն. Նիկողոսյանի գրանցումներում<sup>3</sup> և Թեոդիկի «Պարը» հոդվածում<sup>4</sup>:

Եվ, այնուհանդերձ, Յեդ ու առաջ պարի հիմնական նկարագրություններն ու տվյալները գտնում ենք հայտնի հայ պարագետներ Արթուրի Լիսիցյանի<sup>5</sup> և Ժենյա Խաչատրյանի մի շարք աշխատություններում: Ժենյա Խաչատրյանը Ջավախքի տարբեր քաղաքներում և գյուղերում (Ախալցխա, Ախալքալաք, Շուղղուտ, Ալաստան, Կարծախ, Ծղալթբիլա, Ժդանովկա) դեռևս 20-րդ դարի 60-ական թթ. գրանցել է Յեդ ու առաջ պարի մոտ 11 տարբերակ՝ դրանց մեջ ընդգրկելով նաև Թափալ պարը, Բուլուլը, Էջմիածինը և Մինինդուրը, որպես Յեդ ու առաջ պարածեղ տարատեսակներ:

Պատմությունից հայտնի է, որ դեռևս 1830թ. և ավելի ուշ շրջանների հայկական գաղթերի հետևանքով Արևմտյան Հայաստանի Կարին (Էրզրում) նահանգի բնակիչները հաստատվել են Ջավախքում: Ժամանակի ընթացքում ծովափով տեղացի հայերին՝ ձեռք են բերել ազգագրական որոշակի դեմք ու առանձնահատկություններ: Վերը նշված բոլոր հեղինակներն էլ նշում են, որ Յեդ ու առաջը Կարնո պար է՝ այսպիսով հաստատելով պարի ծագումը և հիմնավորելով դրա տարածվածությունը ջավախցիների մեջ:

«Յեդ ու առաջ»-ը բառակապակցություն է, որ հայերեն նշանակում է դեպի ետ և դեպի առաջ, մերթ դեպի ետ՝ մերթ դեպի առաջ: Սա հիմնական բացատրությունն է, չնայած կան և այլ մեկնաբանություններ: «Ետ ու առաջ անել» կարող է նշանակել տեղերը փոխելով՝ առջևինը ետ և ետևինը առաջ գցել կամ գնալ-գալ: Անլուրջ, խոսքի կշիռ չունեցող մարդկանց անվանում են «Ետ ու առաջ խոսող» և այլն:

Բանասացները վկայել են, որ այդ փակ շուրջպարն անցյալում պարել են միայն տղամարդիկ, կանանց մաս-

սրբազան ուժ է ստանում և շրջապատող աշխարհի վրա ազդեցություն գործում, հնագույն ժամանակներից է գալիս: Այն տարբեր ձևեր է ստանում որպես հմայական խոսք, կախարհական բանաձև, անեծք, բարեմաղթություն և այլն: Սա հատուկ է բոլոր ժողովուրդներին, ողջ պատմության ընթացքում, ընդհուպ մինչև մեր օրերը<sup>7</sup>:

Ըստ այդմ էլ, առաջ ու ետ է պարվում, սակայն ետ ու առաջ է ասվում և ետ իմաստով կամ բառով չի ավարտվում խոսքը: Բանասացները նշում են, որ պարն ավարտելիս անպայման քայլ է կատարվում աջ կամ ձախ, իսկ պարի մասին խոսելիս ասում են Յեդ ու առաջ, որպեսզի հմայությունն ավարտվի «առաջ»-ով, թե՛ հասկացողությամբ և թե՛ արտասանությամբ: Յեդ ու առաջ պարերում առաջ ու ետ պարաքայլերը ուղեկցվում են ոտքի հարվածով, կարծես այդ կերպ վերականգնելով խախտված հավասարակշռությունը, վերջ դնելով տատանմանը, հաստատելով քառույց կոսմոս անցումը:

Հունական աղբյուրներում նշվում է 9/8 երաժշտական չափ ունեցող Հյուսիսային Թրակիայի և Մակեդոնիայի Պիսո-բրոս շուրջպարի մասին: Պիսո-բրոս հունարենից թարգմանված նշանակում է ետ ու առաջ:

Թատերագետ Խ. Սամուելիդիսը պոնտական պարերի իր գրքում նշում է Յեդիառաջ կամ Յեդիարա կամ Յառաջ պարի մասին՝ տալով հետևյալ բացատրությունը. «Թուրքերեն յեդի նշանակում է յոթ, առաջ՝ նշանակում է միջոց, հերթ, Յեդիառաջ բառը բացատրվում է թուրքերենով որպես յոթը մրցողների պար»<sup>8</sup>:

Փաստորեն, իրականում խոսքը հայկական Յեդ ու առաջ պարի մասին է և երեք անվանումներն էլ ոչ թե թուրքերեն, այլ հայերեն են ստուգաբանվում և նույն միտքն են արտահայտում, այսինքն ետ և առաջ, ուղղակի փոքր-ինչ հնչյունափոխված ձևով: Երկրորդ անվանման դեպքում վերջի ջ կամ չ հնչյունն է պակասում և երրորդի դեպքում՝ բառակապցության միայն երկրորդ մասն է ասվում, այսինքն՝ առաջ:

Պոնտական պարերի մասնագետ Ն. Ջուռնաձիդիսի գրքում պարը կրկին բերվում է մի քանի անվանումներով՝ Յեդիերե կամ Յեդի՝ Առաջ կամ Յեդիառաջ, որպես Պոնտոսի Արյիրուպոլի (Գյումուշխանե) շրջանի պար: Որպես Յեդ ու առաջի տարբերակներ նշվում են Յավաստոն և Դիպատ պարերը: Կրկին բերվում են պարի անվանման տարբեր բացատրություններ թուրքերենով, սակայն պարի նկարագրությունը ևս ապացուցում է դրա հայերեն անվանումը և տեսակը՝ այսինքն Յեդ ու առաջ, որ պարվում է առաջ ու ետ<sup>9</sup>:

Թեմայի առումով հետաքրքրական է նաև պոնտական էմբրոպիս պարը, որի անվանումը նշանակում է առաջ ու ետ<sup>10</sup>:

Ակներն է, որ հայկական ու հունական աղբյուրներում նշվող Յեդ ու առաջ, Պիսո-բրոս և էմբրոպիս պարերը նույն պարատեսակի տարբեր էթնիկ խմբերում ժամանակի ընթացքում մասնակի փոփոխություններ կրած տարբերակներն են: Դրանք բոլորը նույն անվանումն ու 9/8 երաժշտական չափն ունեն:

Բոլոր տարբերակների անվանումները և՛ հայերեն, և՛ հունարեն լեզվով, վկայում են պարի հիմնական շարժման՝ առաջ ու ետ կատարվող քայլերի մասին, որոնց շուրջ ավելա-

նում են այլ պարաքայլեր և շարժումներ: Իհարկե պոնտական պարերի շարքում նշված Յեդ ու առաջը աներկբա հայերեն անվանումն է նույնանուն հայկական պարի, որը ոչ մի առնչություն չունի թուրքերեն ստուգաբանության հետ: Ջարմանալիորեն պոնտոսցի և օտար հեղինակների մեծ մասը պոնտական մշակույթին բնորոշ անվանումները հիմնականում փորձում են ստուգաբանել թուրքերենով, կարծես թե Պոնտոսում դարեր շարունակ հույներից ու թուրքերից բացի ուրիշ ժողովուրդներ ու ցեղեր չեն ապրել, հետևաբար այլ լեզուներ ու բարբառներ չեն գործածվել<sup>11</sup>:

Հայտնի է որ և հունական, և՛ հայկական մշակույթներում միայն այս ազգերին բնորոշ բազում ստեղծագործություններ հայտնի պատճառներով թուրքերեն անվանումներ ունեն, սակայն տվյալ պարագայում այդ հանգամանքը չի գործում:

Պոնտոսում հայ և հույն ժողովուրդների համատեղ ապրելակերպի ընթացքում, հնարավոր է որ Յեդ ու առաջը միասին պարելով՝ յուրացվել է իր շարժական տեքստով, իմաստով ու տրամադրությամբ:

Մշակույթի ավելի ուշ շրջաններում, կապված հայ ժողովրդի բռնի տեղահանման, հավատափոխման և կոտորածի հետ, պարն իր բնիկ տեղավայրում չի մոռացվել, պարվել է տեղացիների կողմից, առանց նշանակություն տալու դրա բուն իմաստին, այսինքն՝ նպատակադրման, պարաքայլերի և անվանման փոխկապին: Անշուշտ և գաղթական հայերը չեն մոռացել այն՝ շարունակելով պարել իրենց նոր հայրենիքում, հայոց երկրի տարբեր շրջաններում:

Այսպիսով, հայ և հույն մշակույթներում տարածված Յեդ ու առաջ տեսակի պարերի համադրումն ու մոտավոր վերլուծությունը փաստում է դրանց մշակութային զուգահեռ երևույթ լինելու իրողությունը: Նաև բացահայտվում է այս պարերի ինքնատիպությունն ու արժեքը՝ փորձելով մեկնաբանել դրանց ծագումը, անվանումն ու նպատակադրումը և ժողովրդական մտածելակերպին հարազատ իմաստը:

- 1 Կոմիտաս, Հայ ժողովրդական երաժշտություն, Նոր շարք «Պարեր», Մաս Ա, Փարիզ, 1925:
- 2 Պարահանդեսի ծրագիր, Թիֆլիս, 1908, ՀԱԻ, Սրբ. Լիսիցյանի արխիվ:
- 3 Ն. Նիկողոսյան, Շուրջպարերի ձևեր (Լենինական), ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության սեկտորի արխիվ, գործ 1/3, 1924:
- 4 Թեոդիկ, Պարը, Ամենուն Տարեցույցը, Փարիզ, 1927, էջ 390-391:
- 5 Տրբ. Лисиция, Армянские старинные пляски, Е., 1983.
- 6 Ժ. Խաչատրյան, Ջավախքի հայ ժողովրդական պարերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 7, Երևան, 1975:
- 7 Ա. Իսրայելյան, Ոչ իրեղեն հմայական պահպանակներ, Նյութեր «Հայ ժողովրդական մշակույթ» հանրապետական գիտական նստաշրջանի, Ե., 2006:
- 8 Խ. Սամուելիդիս, Պոնտական պարեր, Աթենք-Կալիթեա, 2000, (հունարեն):
- 9 Ն. Ջուռնաձիդիս, Պարային գործունեություն և Պոնտոսի պարերը, Աթենք, 1999, (հունարեն):
- 10 Ա. Ռաֆթիս, Հունական պարի հանրագիտարան, Աթենք, 1995, (հունարեն):
- 11 D. Kilpatrick, Function and Style in Pontic Dance Music, Athens, 1980.

# «Զինների քարավանների» երթը դեպի Համշեն

Համշեն գավառը, որ բնության մի անձեռակերտ ու խորհրդավոր անկյուն է, հարուստ է բանահյուսական անգնահատելի գոհարներով, որոնք ինքնատիպ են, և ամբողջովին ներդաշնակ համշենական բնությանն ու տեղի մարդկային էությանը: Մշտապես խոնավ ու անձրևային, մառախլապատ եղանակը, Համշենի անանցանելի դարավոր անտառներն ու անառիկ լեռները, որոնք մի խորհրդավոր ու հեքիաթային աշխարհ են հիշեցնում, դարձել են համշենցիների ստեղծած գրույցների և պատմությունների միջավայրը: Պատահական չէ, որ հայ մատենագրության մեջ դեռևս 5-րդ դարում հայ պատմիչ Եղիշեն պատմական խախտիք գավառը, որում հետագայում ծնավորվում է Համշենի հայկական իշխանությունը, իր անանցանելի, մշուշապատ անտառների պատճառով կոչել է «յանլոյս երկիրն իսխտեաց»: Կիլիկյան հայոց Հեթում արքան էլ, ով անցել է այս տարածքներով, Քաջքարի լեռնաշղթան, որն ունի երեք բարձրաբերձ գագաթներ (Քավրոն, Թահվոր, Վերջենիկ), անվանել է «Քաջերու դև»<sup>2</sup>: Եվ պատահական չպետք է համարել նաև այն, որ համշենցիներն ունեն բազմաթիվ հեքիաթներ ու գրույցներ փերիների, ջինների, ջարդուների, կոնջուրդի ու ոգիների, հատկապես ջինների քարավանների մասին: Տեղի բնակիչները Համշենի կախարդական բնության, առեղծվածային անտառի ընկալումն արտահայտել են իրենց բանահյուսության մեջ: Ինչպես յուրաքանչյուր մի առասպել-

լացված պատմություն, այս և նման հեքիաթներն էլ ունեն որոշակի իրական հիմքեր: Մասնավորապես, իրականը Համշենի տարածքն է, որ դարձել է նման պատմությունների գլխավոր միջավայրը: Նշենք նաև, որ Համշենով են անցել առևտրական քարավանների ճանապարհները: Բաբերդի, Սպերի և Համշենի դժվարագնա անցուղիների վրայով է իրականացվել Իրանի, Հնդկաստանի և Տրապիզոնի միջև կատարվող առևտուրը<sup>3</sup>: Այսինքն, քարավանների մասին պատմություններն իրական են, ունեն պատմական հիմքեր, որոնք անցյալում բնակիչների կողմից հեքիաթային դիցաբանական պատմությունների վերածվելով, հասել են մինչև մեր ժամանակները: Դեռևս 1406 թվականին իսպանացի ճանապարհորդ Ռուի Գոնսալես դե Կլավիխոն մի արժեքավոր հաղորդում է թողել այն մասին, որ Սամարղանդ գնալու ճանապարհին նրա պատվիրակությունը մինչև Տրապիզոն հասնելը, անցել է Համշենի տարածքով, որ այն ժամանակ հայտնի էր նաև Առաքելի երկիր անունով: Առաքելն այդ հողերի տերն էր, ու «թեև նրա բնակիչները քրիստոնյա հայեր էին, սակայն չար և ավազակաբարո ինն»: Նրանցից մինչև անգամ հարկ էին վերցնում, նրանք թույլ էին տալիս, որ իրենց հողերով պատվիրակներ անցնեն<sup>4</sup>: Այստեղից Կլավիխոն անցնում է Սյուրմենե, ապա՝ Տրապիզոն: Նա նաև նշում է, որ «այդ երկրամասն լեռնոտ է, ունի մի քանի լեռնանցքներ, որոնցով անկարող են

անցնել կենդանիները: Որոշ տեղերում ժայռից ժայռ անցնելու համար փայտե կամուրջ են կապել: Բեռնակիր կենդանիներն այդ երկրամասում, ըստ մեծի մասի, անկարող են շարժվել, և մարդիկ ստիպված են ամեն ինչ կրել իրենց ուսերին»<sup>5</sup>: Ինչպես գրում է Ղ. Ինձիճյանը, համշենցիներն, ըստ մեծի մասի «վաճառականք արջառոյ և մանավանդ խաշանց ու այծեաց...», որոնք իրենց ապրանքը բերում էին վաճառելու Սև ծովի ափամերձ շրջանները<sup>6</sup>: Համշեն աշխարհի գողտրիկ անկյուններից մեկն էլ Չայելի (Մափավրի) գավառի Սենոգի (Էքսանոց) շրջանն է, որ հայկական աղբյուրներում հիշվում է Սենեծոր կամ Սենեգ-Ղերե անունով<sup>7</sup>, ուր այսօր էլ կան համշենական գյուղեր: Այստեղի համշենցիներն էլ իրենց խոսակցական թուրքերենում պահպանել են բացառիկ արժեք ներկայացնող հայերենի Համշենի բարբառից մնացած բառեր, տերմիններ, տեղանուններ, նաև հեքիաթներ ու գրույցներ: Այս տարածքի շատ համշենցիներ իրենց մեծերից լսել են փերիների, ջինների մասին պատմություններ, որոնք յուրովի վերարտադրվել են իրենց հիշողության, անգամ ստեղծագործությունների մեջ: Թուրքերենից մեր իսկ թարգմանությունները ներկայացնում ենք ծնունդով Սենոգի շրջանից պատկանող Հահոնջ (Խախոնջ) ներկայումս Չաթալդերե, գյուղից համշենցի բարեկամի գրած՝ «ՄԻ ԶՐՈՒՅՑ ՄԵՐ ԵՆԹԱԳԻՏԱԿՄԻՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՍ ԶՐՈՒՅՑ

ԶԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» բանաստեղծությունը, որը իր կառուցվածքով ավելի շատ գրույց-ասք է հիշեցնում: (Հասկանալի պատճառներով նպատակահարմար չենք գտնում հրապարակել հեղինակի անունը): Այս բանաստեղծության համար հիմք են հանդիսացել համշենցի բարեկամի՝ իր տատից լսած ջինների մասին պատմությունները: Այս և նման պատմություններ մեծահասակները պատմում էին երեկոները, երբ Համշենի խորը ծնունդ ժամանակ, ընտանիքի բոլոր անդամները հավաքվում էին օջախի շուրջը՝ տաքանալու, ծնունդ երկար ու ծիգ օրերն անցկացնելու համար կամ էլ ամռանը՝ յայլաներում (արոտավայր) գտնվելու ընթացքում:

### Բանասիրական գիտ. թեկ. ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱՎՅԱՆ

1 Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1989, ԵՊՀ հրատ., էջ 252:  
 2 Տաշեան Յ., Տայք, դրացիք եւ խոտորջուր, պատմական-տեղագրական ուսումնասիրութիւն, հ. Բ, Վիեննա, 1980, էջ 101:  
 3 Խաչիկյան Լ., Էջեր համշինահայ պատմությունից, Բանբեր Երևանի Համալսարանի, Երևան, 1969, N 2, էջ 126:  
 4 Руй Гонсалес де Клавихо, Дневник Путешествия в Самарканд ко двору Тимура (1403-1406), Москва, Наука, 1990, с. 160  
 5 Руй Гонсалес де Клавихо, նույն տեղում:  
 6 Ղ. Ինձիճյան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 396:  
 7 Ս.Հայկունի, Նշխարներ. կորած ու սոռացուած հայեր, Արարատ, Վաղարշապատ, 1895, թիվ 7, էջ 296:

## Մի գրույց մեր ենթագիտակցության պատճառների մասին կամ գրույց ջինների մասին

Երբ կրակի բոցերը մեղմացել էին, Եվ վառվող կրակը մարել էր ու վերածվել էր շիկացած ածուխի, Հեքիաթասաց ծեր կինը իր գրույցն էր ուզում սկսել: ...Ձմռան գիշերները երկար էին և ցուրտ : Բոցը թույլ, բայց դեռ տաքությունը զգալի, Եվ կրակը էլ ավելի էր խորաթափանց դարձնում Ծեր կնոջ դեմքի խորը խնձիռները: Նրա աչքերում հեռու ժամանակների Թախիծ ու վախ կար: Ահա թուրք կուլ տալով՝ սկսեց պատմել... Բայց նրա պատմածը հեքիաթ չէր, Այդ գիշեր նա հեքիաթ չպատմեց, Այդ գիշեր նա մի իրական դեպք պատմեց... Այդ գիշեր նա ցանկանում էր, որ իր ասելիքը շատերին հասներ: Քարավաններից պատմեց, Հնում, շատ հնում անցած, գիշերային քարավաններից... - Մեր մեծերը ասում էին,- - Շարունակեց նա իր պատմությունը,- Որ անհիշելի ժամանակներում Ծանոթ վայրերով Մի գիշեր ևս գիշերային քարավաններն էին անցնում, Դրանք Զինների քարավաններն էին: Գալիս էին անծայն, Բայց շատ հեռվից էր լսվում նրանց քայլերի արձագանքը: Թաքնվում էին բոլորից, Բայց երբեք անծայն չէր մնում նրանց հեռանալը: Ձիերի պայտերի ծայրեր, հսկա սապատով Ուղտերի կառաչոցներ, Ծանր պղնձե զանգակներ, Թամբերին բարձած շատ թանկարժեք բեռներ, Մետաքսներ, տեսակ-տեսակ համեմունքներ, Գիշեր, քոմարների (ծաղկի տեսակ) մեջ զբոսնող շնկանկան քամի: Հաճախ կարծես երգ հիշեցնող բուի ծայն, Եվ մթության քարավաններ, Որոնք սիրում էին գիշերներ, Խուսափում կրակից, Բայց լույսեր էին ցայտում Մթության այդ քարավանները: -Իմ մտքերին են վերադառնում,- -Ո՞վ գիտի, որտեղից էին գալիս: Մթության, խորհրդավոր ու սարսափեցնող ճամփորդներ, Թող այլևս չտեսնեմ նրանց: Նրանց պատկերները կարող են ուրվագծել իմ մտքում՝ Քարե դարի նկարչի պես: Հավանաբար բոլոր պատմողներն ունեն ճշմարտացիություն: Հավանաբար ենթագիտակցության մեջ մնացել է

Շատ հին ժամանակների Մոռացված իրական քարավանը, Հավանաբար հազար տարի առաջ հյուսած այս գրույցը Ձիւ քայլն էլ է լսել, Իրանից և Հնդկաստանից եկող, ծովի ճամփա փնտրող Իրենց բեռներից բեռնաթափվելու համար Մի պահ առաջ ապահով մի հանգրվան փնտրող, Ծանր զանգակներով և թանկարժեք իրերով Ծանր բեռնված քարավանների այս գրույցը: Գուցե այն օրերի մի հիշողություն է և գուցե միակ նշանը՝ Համշենցի կանանց կողմից քարավաններից գնած, Դեղին, նարնջագույն, կանաչ, սև գույներով գլխաշորերը Որ Իրանից ու Հնդկաստանից էին բերվում: Իրական մի քարավանի հիշողությունից Ենթագիտակցության մեջ է մնացել տպավորությունը: Հազար տարի է, բոլորովին չտեսնելով իրականը, Մարդկային բանականությունը դա վերագրել է ջիններին:

### Ճամփորդություն քարավանի հետ

Առջևում ծեր տարօրինակ քարավանապետն էր. լուռ Դեմքը ավելի ու ավելի մթնել էր լեռան սառնությունից, Համաչափ էին քայլերը, քարավանը՝ դրանց համընթաց, Շարունակվող և հոգնած Զղաղարող մի ռիթմ, Արած ամեն մի հաջորդ քայլը ավելի էր մոտեցնում Անհայտ վայրին, Ուր ձգտում էր հասնել քարավանը: Այդ պատահաբար բոլորովին չշտապող, Ըստ կարգի նստած, ամեն ինչը տեղն ու տեղին, Բայց և այնպես բոլորովին այն կանգ չի առնում, Գնում է հասնելու իր նշանակետին: Իր տեղից եկել-հասել է ավելի քան հեռուները, Աչք բացելուց ի վեր՝ ճանապարհների վրա, Մշտապես վտանգներով լի, Ամեն անգամ մահվան մի ճամփորդություն, Ահա թե ինչու ստիպված է շուտ անցնել Ամենախոր անդունդները, առանց շտապելու հատել Մութ անտառները, խորը հովիտները, բարձրաբերձ անցուղիները: Ծանր բեռնավորված այս քարավանների համար սուղ էր ժամանակը, Մինչև կդատարկեին իրենց բեռներն ապահով մի հանգրվանում: Մանկությունից մտքում են մնացել Զյուրդը՝ հյութեղ թեթի և թզենու տերևներին թիկնած՝ Խաղողի թառմանները, որ մի զով պատ կարծես լիներ: Ոչ ոք չգիտեր, թե ում է պատկանում այդ քարավանը, Եվ արդյո՞ք սա իրական մի պատմություն է: Թե՞ պատմողի հեքիաթն է, որ դեռ չի կարողացել հորինել: Կամ կրակի լույսից չլուսավորվող, Հոգնած հեքիաթներում թափառող բարեսիրտ ջինների

ստվերն է: Գուցե՞ բարեսիրտ ջինները՝ բեռնավորված, Գուցե՞ այս անգամ և այլ անգամներ գնում էին ջիներին անհայտ երկրներ: Գուցե՞ թաքցնելու պարտադրող մի պատճառ կար: Գուցե՞ չար ջիններից խուսափելու պատճառն էր, Որ քարավանը գիշերներն էր գնում: Միշտ հեռանում էր՝ հասնելու նպատակից, Անցնում առանց մի հետք թողնելու: Չայներն իրենց կողմն էին ձգում, Հավանաբար երազ էր լուսավորվող դեմքը Չով մի պատի տակ: Նրա առջևում Ըղերին թուզ չունեցող թզենին էր: Երևի սա ճամփորդություն է դեպի իմ մտքերի խորքերը: Երբ կանգնեմ ու լսեմ Ամեն ինչ հասկանալու համար, Կամ էլ իմ մտքում կենդանացնեմ, Նախնադարյան մարդու նման, Իմ մտքերում գծեմ Նրանց, որ խոսում էին իմ չիմացած լեզվով, Ականջներումս զգամ նրանց ձայնի անհասկանալի խշշոցը: Դեմքերի անորոշ ստվերները՝ Թուզե, պղնձե զանգակների ու նվագարանների ուղեկցությամբ: Եթե գիշերվա մթության մեջ կարողանայիք քնել Մի մութ անտառում՝ Գետին շատ մոտ... Եվ ծեր դեմքին զբոսներ մի անամոթ քամի, Եվ գիշերվա ամենամութ պահին արթնանայիք՝ աստղերին նայելով, Ու լինի պահը, երբ կայծոռիկները խորը քնի մեջ են, Եվ լսվում է բուի երգը, Մացառների մեջ խշխշոցով զբոսնողների կտեսնեք: Երբ ծիերի պայտեր կզարկվեն քարերին, Եվ կլսվեն սարսափեցնող ձայներ ու կթռչեն կայծեր, Ծանր բեռնավորված ուղտերը, Որ մինչ այդ չէին անցել, Կհնչեցնեն թուզե, պղնձե, երկաթե Ծանր զանգակների ռիթմը:

### Վերադարձ բանականությանը

Մտքի խաղը Հաճախ սիրելի խաղեր է խաղում, Ամեն անգամ չգիտեմք, թե ինչ կարող է անել միտքը: Երբեմն դուք եք նրան կառավարում, երբեմն՝ նա ձեզ: Փոքր մի խորամանկությամբ այն կարող է ձեզ համոզել, Չեր միտքը ձեզ համար կատակներ է անում: Կախարդի նման Չեղածը եղածի պես է ցույց տալիս, Կամ էլ՝ եղածը չեղածի: **«Եղինակ՝ խախտնցի մի համշենցի, 29. 07. 2010**

ԿՈՐԱԾ ՀԱՅԵՐ...

«Ցեղասպանությունը շարունակվում է»



Տեսարան Գիթո յայլայից:

Ցեղասպանության հուշարձանի ճանապարհին, 100 հազարավոր հայերի թափուրում, հանդիպեցի ՀՀ զԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, «Ձայն համշենական» թերթի գլխավոր խմբագիր ՍԵՐՁԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ: Ամբողջ աշխարհի հայերը ապրիլի 24-ին նշում են Ցեղասպանության տարելիցը: Հետաքրքրվեցի՝ ինչպե՞ս են այդ օրը դիմավորում Թուրքիայի հայերը:

«Վերջին տարիներին Ստամբուլի նշանավոր Թաքսիմ հրապարակում թուրք և այլազգի ծախակողմյան մտավորականները, կրոնավորի հայերը, այդ թվում՝ համշենցիներ, դերսիմցիներ, ուրիշներ, նշում են Ցեղասպանության տարելիցը: Բուն Ռիզեի և Արդվիհի նահանգներում, որտեղ ապրում են կրոնավոր համշենցիները, որևէ միջոցառում, բնականաբար, չի իրականացվում»,- ասաց Սերգեյ Վարդանյանը:

Նրա տեղեկացմամբ՝ Արդվիհի նահանգի Խոփայի գավառում կան համշենցիների 20-ից ավելի գյուղեր, որտեղ հայերն են խոսում: «Ռիզեի նահանգում, ցավոք, արդեն հայախոս համշենցիներ չկան»,- ասաց «Ձայն համշենականի» խմբագիրը, նշելով, որ թուրքական քարոզչամեթոդներն ոչ միայն թաքցրել է Ցեղասպանության փաստը, այլև այս մարդկանց փորձել է համոզել, որ հայերն են կոտորել թուրքերին, և որոշակի հաջողության հասել է, մարդիկ կան, որ հենց այդպես էլ մտածում են:

«Երկու տարի առաջ էր, փոքր խմբով Ռիզեի նահանգի Չամլըհեմշին գավառում էինք, բարձրացել էինք լեռներում գտնվող Գիթո յայլա, որտեղ հանգրվանել էինք «Քոչիրա» կոչվող իջևանատանը,- պատմում է Սերգեյ Վարդանյանը: Տերը՝ Սերհան Փիրփիրը, համշենցի էր, Խաչափիտ գյուղից: Նրա մոտ երեկոները գրուցելու էր գալիս մի ամերիկաբնակ 40-50 ամյա համշենցի՝ Էնգին Սանալ անունով, որի ծնողներն ապրում էին այդ յայլայում: Ասում էր՝ կարոտել է ծնողներին, ամռանը եկել է տեսության: Երբ մենք այնտեղ էինք, նա նորից հյուր եկավ իջևանատիրոջը: ԵՊՀ դոցենտ, թուրքագետ Լուսինե Սահակյանը սկսեց ամերիկաբնակ համշենցու հետ թուրքերեն գրուցել, թեման ինքնաբերաբար եկավ հասավ հայ-թուրքական հարաբերություններին: Սովորաբար մենք ինքնության մասին խոսելիս շատ զգույշ ենք լինում: Նախ պետք է պարզել, իսկապե՞ս դիմացինը հայկական ծագում ունի:

Զրույցի ընթացքում Էնգինն ասաց, որ 1915-ին հայերն են կոտորել թուրքե-

րին: Բնականաբար, վեճ ծագեց: Ասեմ, որ Ռիզեի նահանգի շուրջ 60 հազար համշենցիներից շատերը կարծում են, որ իրենք թուրքական ծագում ունեն: Մի մասը գիտի, որ հայկական ծագում ունի, բայց թրքացել է, մի մասն էլ գիտակցելով, որ թուրք չէ, բայց կտրվել է ազգային արմատներից, իրեն անվանում է համշենցի:

Վեճը թեժացավ: Որպեսզի հարթեմ իրավիճակը և համշենցին նեղացած

րին: Մինչ իմ վերադարձը նա հեռացել էր, իսկ Լուսինեն հուսահատությունից, թե համշենցիների շրջանում ինչքան խորը արմատներ է գցել թուրքական կեղծարարությունը, գլխահակ արտասվում էր: Կես ժամ անց Էնգինը հետ եկավ, ասաց, որ մորը պատմել է մեր մասին և նա ուզում է մեզ տեսնել: Մթի ու մշուշի միջով գնացինք նրանց տուն: Փայտաշեն, փոքր տանը մեզ էին

եկել: Ասացինք, որ հայության հետքերն ենք փնտրում, յայլաների, աղբյուրների անուններ ենք գրի առնում, աղոթքներ, բառեր: Համշենցիների լեզվում պահպանվել են բազմաթիվ հայերեն բառեր, և այդ պահին Էնգինը հորն ասաց, որ դրսում «մշուշ» է, օգտագործելով հայերեն «մշուշ» բառը: Մենք իսկույն նրան փաստի առաջ կանգնեցրինք և ասացինք, որ «մշուշ» բառը հենց հայե-



Էնգին Սանալը:



Էնգինի մայրը և Լ. Սահակյանը:



Էնգինի հայրը եւ Ս. Վարդանյանը:

չբաժանվի մեզնից, ես նրանց թողեցի սրահում ու գնացի իմ սենյակ, որպեսզի հայկական հեքիաթների անգլերեն ժողովածուն, որ ինքս էի կազմել և հրատարակել, բերեն և նվիրեն հյու-

սպատում Էնգինի ծնողները: Մայրը մեզ ջերմորեն տուն հրավիրելով, ձեռքը թափ տվեց ամուսնու ու տղայի կողմը և ասաց՝ սրանք արդեն թուրք են դարձել: Հետաքրքրվեց, թե ինչո՞ւ ենք

րեն է, թուրքերենը «սիս» է: Նա զարմացավ:

Մայրը մի քանի հայերեն տեղանուններ թվարկեց, նաև ասաց, որ ցավի դեմ մանկությունից մի աղոթք է հիշում: Լուսինեն բողոքեց, որ գլուխը ցավում է, խնդրեց աղոթի: Կինը թել ու ասեղ վերցրեց, ասեղը թելից կախած օդում շրջան էր գծում և աղոթք էր ասում՝ «Սուրբը եկավ, ցավը տարավ...»: Նա աղոթք էր մրմնջում ու մեզ հարցնում, թե ինքը ի՞նչ է ասում, որովհետև բառերը չէր հասկանում: Շատ ուրախացավ, որ թարգմանեցինք և իմացավ ինչի մասին էր մանկության աղոթքը: Տղան ապշած մեզ էր նայում, այնքան էր շփոթվել, որ հյուրասիրության համար բերած կոկա-կոլայի շիշը ձեռքից վայր ընկավ: Նա հարցնում էր մորը, թե այդ ի՞նչ լեզվով է խոսում: «Մինչև հիմա չգիտեի, որ հայերեն աղոթքներ գիտես, փաստորեն մենք հա՞յ ենք»,- ասում էր՝ նայելով մորը և այդ ամբողջ ընթացքում լուռ նստած հորը: Վերջինս ժպիտով դիտում էր այդ անցուդարձը: Նրա պահվածքից, դեմքի հասկացող արտահայտությունից երևում էր, որ ամեն ինչից տեղյակ է:

Համշենցին ասաց, թե ում պատմի, չեն հավատա, որ ինքը հայ է: Մեզ ուղեկցեց իջևանատուն, որտեղ տիրոջը դեռ հեռվից հարցրեց. «Սերհան, դու գիտեի՞ր, որ համշենցիները ծագումով հայ են, գիտե՞ս, որ իմ մայրը հայերեն աղոթքներ գիտի»:

Մեր նոր ծանոթն ասաց, որ հիմա արդեն ուզում է տեսնել Հայաստանը, եթե գա Երևան, կօգնե՞մք իրեն: Նա դեռ չի եկել, ներկայումս ԱՄՆ-ում է՝ Նյու Յորքի Միդլ Իսլանդում, բայց ֆեսթիվով կապը պահում ենք:

Սերգեյ Վարդանյանը նշեց, որ այսպիսի հարյուր հազարավոր հայեր կան Թուրքիայի գավառներում, որոնք իրենց ծագման մասին պատահաբար են իմանում կամ այդպես էլ չեն իմանում: «Փաստորեն, Ցեղասպանությունը շարունակվում է»,- ասաց նա:

ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՅԱՆ  
«Իրատես de facto», 2013թ.,  
մայիսի 7-9 (թիվ 31)

# Հայոց ցեղասպանության ժամանակ հայերի ինքնասպանությունների սոցիալ-հոգեբանական և սոցիալ-մշակութային դրդապատճառները

ՀԱՍՄԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ



Համիկ Գրիգորյանը ծնվել է 1986 թ., 2008 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի մշակութաբանության բաժինը, 2010-ին՝ մագիստրատուրան: Այժմ աշխատում է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող:

Ցեղասպանությունը վարքաբանության տեսանկյունից ուսումնասիրելու դեպքում կարող ենք սահմանել որպես մարդկային վարքի զանգվածային սոցիալական դրսևորում, որի բնույթը կապված է ինքնագոյատևման բնագրի հետ<sup>1</sup>: Այս համատեքստում ցեղասպանությունը որպես ծայրահեղ սահմանային գործողություն ուղեկցվում է ոչ միայն արտաքին աշխարհին ուղղված ագրեսիայով<sup>2</sup>, այլև՝ ներքին<sup>3</sup>: Երբ 1948 թ. վիկտիմալոգիա (լատ. victim՝ զոհ, հուն. logos՝ ուսումնասիրություն)<sup>4</sup> գիտությունը նոր էր ձևավորվում, գերմանացի գիտնական Հանս ֆոն Հենտինգը գրեց «Հանցագործը և նրա զոհը. Հանցագործության սոցիոլոգիա-սաբանական ուսումնասիրությունը»<sup>5</sup> աշխատությունը, որտեղ հանցագործին ու նրա զոհին դիտարկում է որպես փոխլրացնող գործընկերների: 1975 թ. Բ. Մենդելսոնն արդեն վիկտիմալոգիայի ուսումնասիրության շրջանակներում ներառեց ոչ միայն հանցագործության, այլև բնական աղետների ու ցեղասպանության, էթնիկ բախումների և պատերազմների զոհերին<sup>6</sup>:

Ինքնասպանությունը՝ որպես ներքին ագրեսիայի դրսևորման տեսակ, մարդաբանական երևույթ է, ինչը բնորոշ է միայն մարդուն: Մարդկության պատմության մեջ ինքնասպանության դեպքեր արձանագրվել են դեռևս արքայիկ շրջանում: Պարզունակ հասարակություններում զանգվածային ինքնասպանություններն ունեցել են կիրառական-սոցիալական գործառույթ և նպաստել են ցեղի կամ ազգի պահպանմանը: Այդպիսի հասարակություններում ինքնասպանության էին դիմում այն ժամանակ, երբ ցեղախմբին ոչնչացման վտանգ էր սպառնում: Սովի տարիներին ինքնասպան էին լինում սովորաբար ծերունիները: Հնարավոր է, որ նման վարքագիծը ձևավորվել է, երբ զարգացել է կենսաբանական հարմարվողականությունը և ձնշվել միջտեսակային ագրեսիան<sup>7</sup>:

Տարբեր ժամանակների կրոնափիլիսոփայական հայեցակարգերը ընդունել կամ արգելել են ինքնասպանությունը: Ինչպես բազմաթիվ այլ

մշակույթներում, այնպես էլ հայկական մշակույթում ինքնասպանության վերաբերյալ գոյություն ունեն կրոնափիլիսոփայական ու առասպելական պատկերացումներ: Օրինակ, Արտաշեսի ու Արտավազդի վիպերգում և Արտաշեսի մահվան ժամանակ զանգվածային ինքնասպանություններ են տեղի ունենում<sup>8</sup>: Քրիստոնեական գաղափարաբանության համաձայն ինքնասպանությունը համարվում է արգելված գործողություն. ինքնասպանություն գործողների նկատմամբ չեն իրականացնում ընդունված թաղման ծեսերը: Սակայն չեն դատապարտվում նրանք, ովքեր ինքնասպանության են դիմում՝ պաշտպանելով իրենց պատիվը, հավատը: Կույսերի կողմից իրականացված ինքնասպանությունը ոչ միայն ներվում է, այլև՝ սրբացվում:

Անհատը սոցիալիզացիայի ընթացքում յուրացնում է որոշակի մշակութային «կոդեր», որոնք սոցիումի ներսում տեղի ունենցած միկրոսոցիալական բախման ժամանակ, երբ միասին ի հայտ են գալիս մի շարք պայմաններ ու ազդակներ, կարող են թելադրել կործանարար վարք<sup>9</sup>: Փաստորեն կարող ենք ասել, որ ինքնասպանությունն ինքնանպատակ չէ և սոցիումի ինքնակառուցման համակարգում ունի գործառույթային նշանակություն, որը թելադրվում է տվյալ հասարակության մեջ սոցիալականացումն ապահովող կրոնահոգեբանական-վարքաբանական ինստիտուտներով:

Ֆրանսիացի փիլիսոփա և սոցիոլոգ Է. Դյուրքեյմն իր «Ինքնասպանություն» աշխատության մեջ խոսում է այն մասին, որ գոյություն ունի «սոցիալական օրգանիզմ», «խմբային հոգի», որը գտնվում է անհատից դուրս և նրա վրա արտաքին ազդեցություն է ունենում<sup>10</sup>: Յուրաքանչյուր սոցիալական խումբ ինքնասպանության նկատմամբ ունի միայն իրեն հատուկ խմբային հակվածություն, որը պայմանավորում է անհատական հակվածության չափերը, այլ ոչ թե հակառակը: Այսինքն՝ ինքնասպանությունն անհատի սոցիալ-հոգեբանական անհարմարվողականության հետևանք է միկրոսոցիալական բախման պայմաններում<sup>11</sup>:

Հասարակության սահմանային իրավիճակներում գործում է միևնույն կառուցվածքը, որի ժամանակ ինքնասպանությունը ստանում է զանգվածային բնույթ: Է. Դյուրքեյմը, հստակորեն տարբերակելով անհատական և խմբային բնույթի ինքնասպանությունները, նշում է, որ անհատական դեպքերի առանձնահատկությունները, հատկապես պատճառի ուսումնասիրության շրջանակներում, հետաքրքրում են հոգեբաններին, իսկ զանգվածային բնույթ կրողները՝ սոցիոլոգներին: Հոգեվերլուծության դպրոցի ներկայացուցիչ ամերիկացի գիտնական Կ. Մենինգերը նշում է, որ յուրաքանչյուր հասարակությանը հատուկ են կառուցողական և կործանարար միտումները: Այս մասին դեռևս խոսել է հոգեվերլուծության հիմնադիր, ավստրիացի գիտնական Զ. Ֆրեյդը, ով առանձնացնում է ապ-

րելու բնագրը՝ էրոսը, մահվան բնագրից՝ տանատոսից: Համաձայն Զ. Ֆրեյդի՝ յուրաքանչյուր մարդ հակված է ինքնաուչնչացման, և երբ միասին ի հայտ են գալիս մի շարք պայմաններ ու ազդակներ, այն հանգեցնում է ինքնասպանության:

Այսպիսով՝ ստորև դիտարկենք, թե Օսմանյան կայսրությունում հայ իրականության մեջ ինչի հետևանքով տեղի ունեցավ միկրոսոցիալական բախում, որը հանգեցրեց զանգվածային ինքնասպանությունների: Ցեղասպանության ծրագիրը նպատակաուղղված էր հայությանը որպես սոցիումի (ազգ, տեսակ) ոչնչացմանը, որի իրականացման մեխանիզմներն ուղղորդված էին առաջին հերթին եկեղեցուն, ժողովրդին մոբիլիզացնող էլիտային, ընտանիքին:

Ինքնասպանության համար ստեղծված նպաստավոր պայմաններում՝ ինքնասպանության միտքը ծագում է հանկարծակի, որին անմիջապես հետևում է գործողությունը: Դրսևորվում է ոչ ախտաբանական արձագանք, որը ձևավորվում է կրոնահոգեբանական-վարքաբանական մտածողության ազդեցությամբ, հանգամանքների կուտակման արդյունքում: Հանգամանքային ինքնասպանությունների ժամանակ միջոցները և թելադրվում են իրավիճակային սկզբունքով, որը, սակայն, պայմանավորվում է պատմամշակութային, սոցիալական, կրոնական, գեղագիտական պատճառներով ու սկզբունքներով և իրականացվում կադապրված սյուժեներով: Հայոց ցեղասպանության ժամանակ ինքնասպանության ամենատարածված միջոցներից էին գետը նետվելը<sup>12</sup>, ջրհորը նետվելը, տան կտուրից ցած նետվելը, ինքնահրկիզումը, հազվադեպ էր լինում հրազենի կիրառումը<sup>13</sup>, ինքնաթիռավորումը:

Հայոց ցեղասպանության ժամանակ ինքնասպանության համար նպաստավոր պայմաններում յուրաքանչյուր սոցիալական խումբ ցուցաբերում է իրեն հատուկ հանգամանքային ռեակցիա: Պայմանականորեն կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական սոցիալական խմբերը՝ հոգևորականներ, տղամարդիկ, կանայք: Հոգևորականները դիմում էին ինքնասպանության հանուն հավատքի՝ մտածելով, որ այլևս սպառել են իրենց առաքելությունը: 1895 թ. համիդյան ջարդերը վերապրածի մի հուշագրությունում պատմվում է այն մասին, թե ինչպես խորեն սրբազանը, տեսնելով եկեղեցուց բարձրացող մուխը, ինչպես նաև անպատվության ենթարկված հայ կանանց՝ ինքնասպանության փորձ է կատարում: Նա կարում է իր երակները և արյան մեջ թաթախելով գրիչը՝ քաղաքապետին նամակ գրում, որում ասում է, որ ինքը որպես հայ ժողովրդի հովիվ իրավունք չունի նրանցից երկար ապրելու: Իրեն հսկող ոստիկանին նման վարքը բացատրում է հետևյալ խոսքերով. «Ազգս լմնալին ետք ինչի՞ եմ պետք»<sup>14</sup>: Հայոց ցեղասպանությունը վերապրած Բագրատ Քոչքյանն իր հուշագրության մեջ պատմում է. «Ես, Արշալույսի ձեռքը բռնած,

կանգնել էի հորս կողքին և սարսափով նայում էի գետը թափվող ժողովրդին: Անհնար է նկարագրել այն, ինչ տեսա այդ օրը: Մանկիկը գրկողը վազում էր դեպի գետը: Հինգ թույնում գետի երեսը ծածկվեց դիակներով: Քահանան գրկեց իր կնոջն ու մեկ տարեկան երեխային ու նետվեց ջուրը: Մի քանի վայրկյանից ջրի երեսին երևաց կիսախեղդված քահանան, նա տեսավ, որ փոքրիկը դիակների վրա նստած պտույտ է գալիս, քաշեց նրան և իր հետ տարավ ջրի տակ»<sup>15</sup>:

Հայ կանայք, երիտասարդ հարսներն ու աղջիկներն ինքնասպանության էին դիմում հիմնականում բռնապետությունից խուսափելու նպատակով, իրենց երեխաներին թշնամուն չհանձնելու համար նախընտրում էին ինքնասպանությունը՝ հակառակորդի կողմից սպանված լինելուց: Այս դեպքերն այնքան մեծ տարածում էին գտել, որ նույնիսկ ցեղասպանությունը վերապրածների հուշագրություններում պատմվելիս ստանում են առասպելական երանգներ: Նահատակության թեման հայոց կրոնաառասպելական մտածողության մեջ հայտնվում է գրեթե բոլոր ճգնաժամային, սահմանային իրավիճակներում, որը հատուկ է քրիստոնեական գաղափարախոսությանը. գոհաբերության ակտ է, որն ունի կառուցողական գործառույթ:

Կույսի գոհաբերության դասական օրինակներից է ժայռից ցած նետվելը, ինչպես նաև գետը կամ ջրամբարները նետվելը: Բիրեջիկում թուրքերը հարձակվում են Կարապետի տան վրա, որպեսզի առևանգեն նրա աղջկան, միակը գեղեցկությամբ ամբողջ քաղաքում: Աղջիկը, վախեցած իրեն վիճակված սոսկալի ձակատագրից՝ իրեն գցում է ջրհորը, որտեղ մահանում է: Թուրքերը տան մեջ գտնվող բոլորին սպանելով՝ հանում են աղջկան ջրհորից և անպատվում<sup>16</sup>:

Հայոց ցեղասպանությունը վերապրած Մ. Տեղքմեճյանն իր հուշերում պատմում է, թե ինչպես է Ամենտաղան առանձնացնում 25 գեղեցկադեմ աղջիկների և նրանց հսկելու համար մի ոստիկան նշանակում: Աղջիկներից մեկը զբաղեցնում է ոստիկանին, իսկ մյուսներն իրենց նետում են Եփրատ գետը: Վերջում նրանց է միանում նաև ոստիկանի ուշադրությունը շեղած աղջիկը<sup>17</sup>:

Հայոց ցեղասպանությունը վերապրողներից մեկի ձեռագիր հուշագրության մեջ կարդում ենք. «Այդ անելանելի պահին մեկ ալ տեսնանք խոտորջուրի դեռատի կանայք ու աղջիկները, բոլորը մի քանի հարյուր հոգի միասին, կարծես ի վերուստ իջած աստվածային հրամանով, անշուշտ նախապես պայմանավորված ուխտով, մեկ անգամեն իրար կանչելով մեկգմեկու ձեռքերեն բռնած, մայրերը իրենց մանուկները կրծքերում կամ կռնակին կապած՝ թան, սլացան ու մեկ ակնբարթի մեջ ինքնզինքնին նետեցին Եփրատի ալիքներում մեջ...»<sup>18</sup>:

Շարունակությունը՝ 7-րդ էջում

# Հայոց ցեղասպանության ժամանակ հայերի ինքնասպանությունների սոցիալ-հոգեբանական և սոցիալ-մշակութային դրդապատճառները

Սկիզբը՝ 6-րդ էջում:

Իսկ վերապրող Գառնիկ Ստեփանյանը պատմում է. «Մեր քարավանին միացրել էին զվանեցի երեսուն գեղեցիկ հարսներ: Մի գիշեր դրանց հավաքեցին տարան, մերկացրել էին, ստիպել էին պարել և զվարճացնել իրենց: Երբ նրանց ետ բերեցին՝ զգզված մազերով և այլանդակված վիճակում, նրանք միմյանց ձեռք ձեռքի բռնած՝ իրենց զցեցին Եփրատ գետը: Եվ կամ յոթ հոգինոց մի ընտանիք կար, մայրը վեցին թունավորեց, գնաց իրեն զցեց Եփրատ գետը»<sup>19</sup>:

Վերոհիշյալ պատմություններում տեսնում ենք, որ կանայք իրենց գետն էին նետում երեխաների հետ միասին: Հաճախ, չկարողանալով հոգ տանել երեխաների մասին գաղթի ճանապարհին, հայ կանայք նրանց թողել են ճանապարհներին: Եղել են նաև դեպքեր, երբ նրանք գետն են նետել իրենց երեխաներին: Ս. Պարթևյանը Ադանայի կոտորածների մասին իր հուշագրության մեջ գրում է. «Գիշերը, Առաջնորդարանի մոտ, մթության մեջ նստել էինք Ալանյան հայր սուրբի հետ, տասի չափ կանայք գետնին էին կծկված:

Հայր սուրբը խոսում էր նրանց հետ, մխիթարական խոսքեր ասում: Հանկարծ դարձավ իմ կողմը և ականջիս ասաց, որ այդ կանայք փախուստի ժամանակ Սիհուն են նետել իրենց երեխաներին: Նրանցից մեկը պատմել է. «Գիշերով գյուղով ճամփա ընկանք ցորենի արտերի միջով Ադանա հասնելու համար, մարդասպանները ամենուրեք էին, եթե մեր ծայրը լսեին, պետք է հասնեին մեզ սպանելու: Ինչպես խոսք հասկացնես երեխաներին, նրանք լալիս և գոռում էին մեր գրկում... Անկարելի էր այլ կերպ վարվել, կամ պետք է իրենց զոհեինք կամ բոլորս մահանայինք: Սիհունի կողքով էինք գնում... ու սարսափի ու խուճապի այդ վայրկյանին մեր երեխաները գետը նետեցինք ու հոգիներս ազատեցինք»<sup>20</sup>:

Իսկ Ջ. Եսայանի հուշագրության մեջ մի կին պատմել է. «Սարսափահար՝ իրենք միշտ լուռ են ու անշարժ: Յանկարծ, անգիտակից ու խիզախ, մանկական ծայր մը կ'ճչէ: ... Սարսա-

փելի ոճիրը վճռուած է. 15 գույզ բոցավառ աչքեր, նկուղին մթության մեջ կփնտռեն զայն... մայրը կհասկանայ եւ խուլ ձայնով կ'առաջարկէ՝ յուսալով, որ մահը նուազ վայրագ պիտի ըլլայ իր տղեկին համար... Բայց իր մայրական մատները անկարող եղան պինդ սեղմելու մանկիկին կոկորդին վրայ: Աւելի տիրական, աւելի խիզախ տղուն ձայնը կը բարձրանայ. Սեւ մուլուցք մը կը դողդէ ապաստանողները ու լռին՝ բայց հաստատ կը մօտենան դժբախտ ծնողքին: Ու այս անգամ հայրն է, որ կստանձնէ դժնդակ գործողությունը»<sup>21</sup>:

Տղամարդիկ համեմատաբար ավելի քիչ են դիմում ինքնասպանության: Նրանք դիմում էին այդ քայլին հիմնականում թշնամու ձեռքը չընկնելու համար, իրենց ընտանիքի կործանումը տեսնելու արդյունքում և հիմնականում որոշակի պայքար մղելուց հետո՝ թշնամուն չհանձնվելու նպատակով: Հայոց ցեղասպանությունը վերապրած Մկրտիչ Ղազարյանը պատմում է, որ իր հորեղբայր Կարապետը փախչելու անհաջող փորձ կատարելուց հետո բարձրանում է տան կտուրը և թուրքերի ձեռքը չընկնելու համար իրեն ցած է նետում<sup>22</sup>: Երբեմն տղամարդիկ ինքնասպանություն էին գործում իրենց ընտանիքին սպանելուց հետո: Տիգրան Սիհոյանը հավաքում է իր ընտանիքի բոլոր անդամներին, մոտ 70 հոգի, և նրանց թույլ տալիս, ապա տունը կրակի մատնում: Շատերը իրենց կանանց ու աղջիկներին հրազենով սպանեցին պղծվելուց և իսլամություն ընդունելուց խուսափելու համար<sup>23</sup>:

Հ. Թերզյանը «Կիլիկիոյ աղէտը» աշխատությունում պատմում է, թե ինչպես մի հայ իր կնոջը և զավակներին հարդանոցի մեջ է թաքցնում ու փախչում լեռները: Երբ վերադառնում է և հարդանոցն այրված, իսկ ընտանիքը մոխրացած գտնում, խելագարվում է և ինքնասպան լինում<sup>24</sup>: Մի խումբ հայ տղաներ կռվի են բռնվում Ջեքի բեկի հետ: Նրանցից մեկը՝ Դավիթ անունով, հրամայում է կրակել թշնամու վրա որքան հնարավոր է, բայց մեկական փամփուշտ խնայել: Երկար պայքար մղելուց հետո, երբ վերջանում է պարենը, և նրանք

հայտնվում են անելանելի դրության մեջ, հավաքվում են քարայրի կենտրոնական մասում, ողջագուրվում և Կարապետի հրամանով յուրաքանչյուրը գենքը ուղղում է ընկերոջ ճակատին<sup>25</sup>:

Հայոց ցեղասպանության ժամանակ ինքնասպանության դեպքեր հազվադեպ են հանդիպում ծերերի մոտ<sup>26</sup>, ովքեր այդ քայլին էին դիմում վերջ տալու համար իրենց տառապանքներին, չդիմանալով գաղթի ճանապարհին կրած չարչարանքներին: Ինքնասպանության դեպքեր գրեթե չեն հանդիպում երեխաների մոտ: Որոշ հեղինակներ մանկական և պատանեկան ինքնասպանություններն առանձնացնում են որպես ուսումնասիրության ինքնուրույն ոլորտ: Մանկական տարիքում ինքնասպանության դրսևորումները հաճախ բացատրվում են մահվան նկատմամբ վախի բացակայությամբ: Սակայն Հայոց ցեղասպանության շրջանակներում վարքաբանական ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս ասելու, որ երեխաները հասարակական ամենակտիվ շերտն էին, ովքեր պայքար էին մղում իրավիճակը հաղթահարելու, մահվանից խույս տալու և այդ նպատակով դիմում էին ամենատարբեր միջոցների, հաղթահարում դժվարին ճանապարհ:

Ամփոփելով կարող ենք հանգել այն եզրակացության, որ Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության ժամանակ «հարձակվող» կողմը, խախտելով հայ հասարակության համար ինկուլտուրացիոն նշանակության կարևորագույն ինստիտուտները, ստեղծում էր արհեստական կործանարար (դեստրուկտիվ) միջավայր, որն էլ սոցիոմշակութային նախապայման էր զանգվածային ինքնասպանությունների համար՝ որպես ոչ ախտաբանական ռեակցիայի: Ասվածի լավագույն ապացույցն այն է, որ ինքնասպանությունը զանգվածային բնույթ էր ստանում հենց այդ ինստիտուտները կորոզների կողմից: Ինքնասպանության ձևերը պայմանավորված են հանգամանքային, կրոնահոգեբանական, ծիսաառասպելական էսթետիկայի առանձնահատկություններով:

- 1 Агаян Г.Ц., Винарская Е.Н., Геноцид в свете теории систем, Геноцид - преступление против человечества, Материалы I Московского Международного Симпозиума 18-19 апреля 1995г., М., 1997, стр. 153
- 2 Հետերոագրեսիա
- 3 Աուտոագրեսիա
- 4 Ուսումնասիրում է զոհի վարքի հոգեբանությունը: Малкина Пых И., Психология поведения жертвы, М., 2006, стр. 1.
- 5 Hentig H., The Criminal and His Victim (Studies in the Sociobiology of Crime), New York, 1948.
- 6 Малкина Пых И., Психология поведения жертвы, М., 2006, стр. 2-3.
- 7 Вагин Ю., Профилактика деструктивного поведения, Изд. ПРИПИТ, 2001, стр. 18.
- 8 Խորենացի Ս., Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 193-195:
- 9 Менингер К., Война с самим собой, http://www.myword.ru, стр. 2.
- 10 Дюркгейм Э., Самоубийство: Социологический этюд, М., 1994, стр. 72.
- 11 Дюркгейм Э., նշվ. աշխ., էջ 103-104.
- 12 Ինձէտարապետան Բ., Մեծ եղեռնի շրջանին. Հայ որբի մը ողբասկանը, Փարիզ, 1951, էջ 35:
- 13 Կճիկեան Լ., (Առաքելեան), Մօրենիկ և իր սև տարին, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 61, Գուտուլեան Գ., Կարմիր դրուագներ Կիլիկիոյ աղէտին, Կ. Պոլիս, էջ 51:
- 14 Պապանճեան Ն., Յուշագրութիւն Եղեռնի 1895-ի շարդերէն մինչեւ 1915-ի հերոսամարտը եւ եղեռնը, Երևան, 2004, էջ 62:
- 15 Քոչքոյան Բ., Մի հայի կյանք, Երևան, 2002, էջ 49:
- 16 Սպիրով Դ., Հայաստանը և սուլթան Աբդուլ Համիդը, Երևան, 2000, էջ 43:
- 17 Տէօքմէճեան Ս., Արեան հետքերով..., Սատենաշար ապրիլեան եղեռնի, Անթիլիաս, Լիբանան, 1960, էջ 64:
- 18 Ջեմալ փաշային սպանող Արտաշես Քևորգյանի մասին հուշից, ձեռագիր հուշագրություն, ՀՅԹԻ, թղթապանակ 97:
- 19 Սվազյան Վ., Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2011, էջ 229:
- 20 Պարթևան Ս., Կիլիկիայի արհավիրքը, Կ. Պոլիս, էջ 157-158:
- 21 Եսայան Ջ., Ավերակներուն մեջ, Պէյրուս, 1957, էջ 73:
- 22 Տարագիր հայրս՝ Մկրտիչ Ղազարեանը, Պէյրուս, 1987, էջ 10:
- 23 Գաղտնի տեղեկագիր Տոթթ. Եօհաննէս Լեփսիուսի, Հայաստանի ջարդերը, Կ. Պոլիս, 1919, էջ 126:
- 24 Թէրզեան Հ., Կիլիկիոյ աղէտը, Կ. Պոլիս, 1912, էջ 25, Տարագիր հայրս՝ Մկրտիչ Ղազարեանը..., էջ 10:
- 25 Կճիկեան Լ., (Առաքելեան), նշվ. աշխ., էջ 61, Գուտուլեան Գ., նշվ. աշխ., էջ 51:
- 26 Պալապանեան Ս., Կեանքիս տաք ու պաղ օրերը, Այնթապ-Քեսապ-Հալեպ, 1983, էջ 110:

## Թուրքիայի Հանրապետությունում ամենաշատ մզկիթները կառուցել է հայազգի Ստեփան Արաթանը

Թուրքիայի Հանրապետությունում ամենաշատ մզկիթները կառուցել է հայ ճարտարապետ Ստեփան Արաթանը: Այս մասին, ինչպես հաղորդում է «Արմենարեն»-ը, հայտնում է թուրքական «Հուրիեթ» թերթը: Ճարտարապետը 1993 թ. պարգևատրվել է Թուրքիայի հուշարձանների միության արծաթե մեդալով, հանձնվել է շնորհակալագիր՝ երկրի տարբեր վայրերում կառուցած մզկիթների, կրոնական ու հուշարձանային այլ նախագծեր իրագործելու միջոցով թուրքական ճարտարապետական արվեստին մեծ ծառայություններ մատուցելու համար:



վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ օրերս հնչեցրած այն հայտարարությանը, թե «մզկիթի ճարտարապետի հարցում կարելու է նրա մահմեդական լինելը, քանի որ ոչ մահմեդականի համար դժվար է որսալ այդ հավատքի ոգին», ինչի համար էլ Ստամբուլում կառուցվելիք ամենամեծ մզկիթի համար միջազգային

հայտամրցույթ չի հայտարարվելու: «Ճարտարապետը պետք է կարողանա հասկացնել, թե ինչ է ինչու է կառուցել: Մեծն Սինանը դա կարողացել է եւ 600-ից ավելի հուշարձաններ է թողել մեզ: Արեւմուտքի ոգու աշխարհում թուրքերին պատկանող մշակույթ չկա: Այդ պատճառով էլ ոչ մահմեդականի համար մզկիթի ոգին հաղորդելը հեշտ չէ», -ասել էր նա:

«Լավ, իսկ ինչ՞ կասեք ազգությամբ հայ մեր քաղաքացի Ստեփան Արաթանի նախագծերի մասին: Գերմանիայի Քյոլն քաղաքում Թուրքիայի կրոնական նախարարության կողմից կառուցվող Եվրոպայի ամենամեծ մզկիթի նախագծի հեղինակը եկեղեցիների ճարտարապետ գերմանացի Պաուլ Քյոհմն է: Ինչու՞ ենք մենք մեզ անընդհատ «հղկում»՝ իրականությունն անտեսելով», - նկատում է թերթը:

Էրդողանը մոռացել է, որ Օսմանյան կայսրության զլխավոր ճարտարապետ, օսմանյան ճարտարապետության հիմնադիր եւ ռահվիրա Սինանը, ում կառուցած մզկիթներում են աղոթում իր ժամանակակիցները, նույնպես ազգությամբ հայ էր:

Թերթն ուշադրության է հրավիրում Թուրքիայի

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ գաղափարային և ազգագրության հիմնադրամի կազմակերպիչի գիտաշխատող

Նոր հանդիպում Յուսուֆ Վալիչի հետ



Յուսուֆ Վալիչ

Թուրքիայի հայախոս համ- շենահայերի շրջանում Յու- սուֆ Վալիչը ճանաչված բա- նաստեղծ է, նաև՝ սիրված եր- գերի բառերի հեղինակ: Նա ստեղծագործում է Համշենի բարբառի խոփայի խոսված- քով, կամ ինչպես իրենք են ասում՝ համշենակ: Նրա հետ մի քանի անգամ՝ 2010, 2011, 2012թթ. հանդիպել են խոփա- յուն, նրա բանաստեղծություն- ներից երեքը բարբառով և իմ թարգմանությամբ հրատարա- կել են «Ձայն համշենական» թերթում (2010թ., N 9-10): Նա ծնվել է 1961 թ. խոփայի գա- վառի Բաշորա (նախկին Խի- գո) գյուղում: Հայրենի գյուղի տարրական դպրոցն ավար- տելուց հետո խոփա քաղա- քում 2-3 դասընկերներով սե- նյակ են վարձել «Օղա փերնաձ ունաքի», և կրթությունը շարու- նակել է խոփայում:

(Սրտիցս է գալիս, գրում եմ: Ինքնիրեն է գալիս, գրում եմ, մի կողմ եմ դնում: Մի օր, մի հոգի որ չլինի, իմ երեխանե- րը բաց կանեն, կկարդան: Հի- մա ընկերներին եմ կարդում: - Նրանք ի՞նչ են ասում,- հարցրեցի նրան: -Որը ասում է՝ լավ է, որը չի հասկանում,- պատասխանեց նա):

Այս անգամ «Ձայն համշե- նականի» ընթերցողներին եմ համշենակ և թարգմանաբար ներկայացնում Յուսուֆ Վալիչի մտորումներն իրենց խոսված- քի մասին:

Իսա օրէս ինչպէս էգաք

Աչվենիյէս Խիգոյի քյաղին փաց աաք: Խաբրուչի գէբաք հանա, արաչ «յէ մա» ապաք, «մայի» ապաք, «չուր», «հաց» ապաք, «մամի», «բաբի», «այէ», «քենա» ասէլօվ լիզվէ- նիյէս թարցնուչէ սօրվէցաք: Ուուչ (ուլիչ)\* լիզու գօննուչան խաբար չունաքի: Դանէ- թերա- նէ համշենակ լիզվենիյօվէս թերչադեցաք: Դանձէ համշե- ցես բէս քադեցաք: Համշէցես բէս գիյաք: Գիյազէ գիլիմօրին դազէ քուագուցէ մէչէ դանէ ընթալիդադէ համշէցես բէս քօ- լէցաք: Համշէցես բէս շօղաք: Ուուչ չիգարաքի, ուուչ աշ- խար, ոուուչ լիզու, ոուուչ ինչիք չքիդաքի: Մէք, մէմէ մէր աշ- խարէս գօ, մէր աշխարին ալ մէմէ մէք գօք, քիդաքի: Մէր քյաղին էնթին, ապիս, տայվա, տայվէ սարիյէ դէսէվի գուն: Սարօուն վաան ալ էրգինքէ դէսէվի գու: Անդի թուս ինչիք դէսնուլ չաքի: Բիթուն աշխա- րէս իսա դէսէվաքաձէս աղաձ ա, քիդաքի: Ուուչ աշխար գօն- նուչէ մէդօյի չիգաաքի:

Օղթէ դայի ոուուչ լիզու չքի- դաքի: Բիթուն համշենակ խաբրեցաք, ամա համշենակ քիյեցաք օչ: Անուբէն չքիդաքի: Ան համա քիր քիյեցաք օչ: Օղ- թէ դարվու վաան մաքաք էր- թուչի գէբաք: Անդաղ «այէ»-ին դադէ «գէլ», «քենա»-ին դադէ «գիթ» ասուչի գէբաք:

Գամաց-գամաց ոուուչ լիզու խաբրուչի գէբաք: Ուուչ լիզու գօննուչէ քիդաքաք: «Ույու, ու- յու, յաթ: Յաթ, յաթ, ույու» ասէ-

լօվ սօրվէցաք: Աչվենիյէս փաց աէք: Աշխարէս ինչվէս թարնա գու սօրվէցուցին օչ: Ամա «ու- յու» ապիս դէյի, մէք բարգէ- ցաք ու քուն աղաք օչ: Թուրք- չէն սօրվէլէ համշենակն ալ մօլիյեցաք օչ: Երգու լիզու փա- նեցուցաք: Մէգ լիզուն քիյե- ցաք: Հինգ դայի մաքաքին գարթուչէ, քիր էնուչէ, մէգ, էր- գուս, յիյէք, չօրս, հինգ համ- րուչէ սօրվէցաք: Համշենակ մէգ, էրգուս համրուչէ ինչուք օղթէ դաազանէ սօրվէցաքի: Մաքաքին ալ թուրքչէն սօր- վէցաք: Հինգ դարվու հէդէվ սէմթաքու մաքաքէ թամնէ- ցաք: Մէձ մաքաքէ գարթուչի ամա ձիյափէ՝ Հոփա, ինչաք:

Մէր քյաղին մէչնան դէսէ- վաձ սարօուն ու էրգինքան ու- ուչ դաղնուք ալ, ոուուչ աշխար գօննուչէ էնթամէ դէսաք: Յա- աց վաա շինված մէձ-մէձ դէնի- յէ էնթամէ դէսաք: Բիգիդեքի- դիք, մէձ-մէձ արաբանիյէ էն- թամէ դէսաք: Հերու-հերու ջամփէդիքէ արաբացօվ էր- թուչէ էնթամէ սօրվէցաք: Զէ- րանէ ձիյափանէ դէսաք: Մէք քյաղօուն քազաղիցօվէ լամբա քօլազուքի, քազաղի չուննա- ցաձ օղթունաքէ մարիս քօլա- գուքի: Մարիս ալ չուննաքի հա- նա, գիյազուցէ լուսօվէ դանէ նէսթագուքի: Զիյափանէ լուսէ քօլուչն ալ շաղ գօլայի էր: Դա- րաբային վայի դուդին մաղիյէդ նէթաղի հանա, խէլօք գայիր: Քյաղին մարիսէ, լամբան քօ- լուչի ամա քիչ մէ թաղուչ բի- դանա գուր:

Համշենակական թուս լիզու գօննուչէ ձիյափանէ դէսաք: Դաղաքէ ոուուչ-ուուչ լիզունի խաբրէ գունի, ոուուչ լիզվենիյօ- վէ գանչէ գունի: Զանի լիզու, գյուրչէց լիզու գար: Մէք մէմէ թուրքչէն սօրվէցաք: Համշէ- նակ լիզույին բէս մէգալ լիզվէ- նիյէ օօք սօրվէցէնէ չէր: «Մէմէ թուրքչէն քիդանուչէ հէյիք ա», - գասէնի:

Ուսթի՞ էգաք, նօ՞ր գէրթաք, ի՞նչ ինք, ի՞նչ չիք, չքիդաքի, սօրվէցաք: Փօլիթիք մէձվօրնի- յէ ինչ էլլուչնիյէս սօրվիք ուզէ չին: Ամա մէք սօրվէցաք: Փօլի- թիք մէձվօրնիյէ գարթուչ, մէձ մարթ էլլուչնիյէս, մէձ փանէր, մէձ աշխարէս ինչվէս թար- նուչէ սօրվուչնիյէս ալ ուզէ

չին: Փօլիթիք մարթիքէ, համ- շենակ խաբրուչէ մօլէյիք, քու- գէնի: Համշենակ գօնչուչէ, խաղուչէ մօլէյիք քուզէնի: Համշենակ խաբրօղնօուն, համշենակ գօնչօղնօուն նէ- քէվ դէսնէ գունի: «Համշէցի դէ- յի ինչիք չք», - գասէնի:

\*Ավելի հաճախ օգտագործ- վում է «ուլիչ» տարբերակը:

Այս օրիս ինչպէս եկանք (թարգմանություն)

Աչքերս Խիգո՛ գյուղում բաց արեցինք: Որ սկսեցինք խոսել, առաջ «յէ մա»<sup>2</sup> ասացինք, «մայր» ասացինք, «ջուր», «հաց» ասացինք, «տատիկ», «պապիկ», «արի», «գնա» ասելով՝ լեզուներս պտտել սո- վորեցինք: Ուրիշ լեզու լինե- լուց լուր չունեինք: Տանը, դր- սում մեր համշենակ<sup>3</sup> լեզվով թռչկոտեցինք: Տանձը համշեն- ցիների պես քաղեցինք: Համ- շենցիների պես կերանք: Կրա- կը գիլիմորի՛ տակ՝ օջախում, տան նստելու սենյակում համ- շենցիների պես վառեցինք: Համշենցիների պես տաքա- ցանք: Ուրիշ չէինք կարողա- նում, ուրիշ աշխարհ, ուրիշ լե- զու, ուրիշ ոչինչ չգիտեինք: Մենք գիտեինք միայն մեր աշ- խարից կա, մեր աշխարհում միայն մենք կանք: Մեր գյուղից այն կողմ, այս կողմ, ներքև, վերև սարերն են երևում: Սա- րերի վրա էլ երկինքն է երևում: Դրանից բաց ոչինչ չէինք տե- սել: Ամբողջ աշխարհը այս տե- սածներս է եղել, գիտեինք: Ու- րիշ աշխարհ լինելու մասին մտածել չէինք կարողանում: Յոթ տարի ուրիշ լեզու չգիտե- ինք: Միշտ համշենակ խոսե- ցինք, բայց համշենակ չգրե- ցինք: Այբուբենը չգիտեինք: Դրա համար գիր չգրեցինք: Յոթ տարեկանից սկսեցինք դպրոց գնալ: Այնտեղ սկսե- ցինք «արի»-ի փոխարեն «գէլ»<sup>5</sup>, «գնա»-ի փոխարեն «գիթ»<sup>6</sup> ասել:

Կամաց-կամաց սկսեցինք ուրիշ լեզվով խոսել: Ուրիշ լե- զու լինելը իմացանք: «Ույու, ույու, յաթ: Յաթ, յաթ, ույու»<sup>7</sup> ասելով սովորեցինք: Աչքերս բաց արեցինք: Աշխարհի ան- ցուդարձը՝ չսովորեցիք: Բայց «ույու» որ ասացին, մենք պառկեցինք ու չքնեցինք: Թուրքերեն սովորելիս համշե- նակն էլ չմոռացանք: Երկու լե- զու բանեցրինք: Մեկ լեզվով գրեցինք: Հինգ տարի դպրո- ցում կարդալը, գրելը, մեկ, եր- կու, երեք, չորս, հինգ հաշվելը սովորեցինք: Համշենակ մեկ, երկու հաշվելը մինչև յոթ տա- րեկանը սովորել էինք: Դպրո- ցում էլ թուրքերենը սովորե- ցինք: Հինգ տարուց հետո տարրական<sup>9</sup> դպրոցը ավար- տեցինք: Մեծ դպրոցում սովո- րելու համար քաղաք՝ Խոփա

իջանք: Մեր գյուղի միջից տեսնված սարերից ու երկնքից ուրիշ տեղեր էլ, ուրիշ աշխարհ լինե- լը այն ժամանակ տեսանք: Այն ժամանակ իրար վրա շինված մեծ-մեծ տներ տեսանք: Փոքր- փոքր, մեծ-մեծ մեքենաներ այն ժամանակ տեսանք: Հերու-հե- ռու ճանապարհներով մեքե- նայով գնալը այն ժամանակ իմացանք: Էլեկտրականությունը քաղաքում տեսանք<sup>10</sup>: Մենք գյուղում նավթով լամպ էինք վառում, նավթ չունեցած ժա- մանակներում մարիս էինք վա- ռում: Որ մարիս էլ չունենայինք, կրակի լույսով էինք տանը նս- տում: Քաղաքում լույսը վա- ռել էլ շատ հեշտ էր: Որ պա- տի վրայի ելուստը մատներդ սեղմեիր, իսկույն վառվում էր: Գյուղում մարիսը, լամպը վա- ռելու համար մի քիչ աշխատել էր պետք:

Համշենակից բացի լեզու լինելը քաղաքում տեսանք: Քաղաքում ուրիշ-ուրիշ լեզու- ներով էին խոսում, ուրիշ լե- զուներով էին երգում: Լազի լե- զու, վրացիների լեզու կար: Մենք միայն թուրքերեն սովո- րեցինք: Համշենակ լեզվի նման ուրիշ լեզուներ ոչ ոք չէր սովորեցնում: «Միայն թուրքե- րեն գիտենալը հերիք է», - ասում էին:

Որտեղի՞ց եկանք, ու՞ր ենք գնում, ի՞նչ ենք, ի՞նչ չենք՝ չգի- տեինք, իմացանք: Քաղաքա- կան մեծավորները չեն ուզում ինչ լինելներս իմանանք: Բայց մենք իմացանք: Քաղաքական մեծավորները կարդալ, մեծ մարդ դառնալներս, մեծ բա- ներ, մեծ աշխարհի անցուդար- ձը իմանալներս էլ չեն ուզում: Քաղաքական մարդիկ, համ- շենակ խոսելը ուզում էին՝ մո- ռանանք: Համշենակ երգելը, խաղ ասելը ուզում էին՝ մոռա- նանք: Համշենակ խոսողնե- րին, համշենակ երգողներին ներքում էին տեսնում: «Համ- շենակական ոչինչ չկա», - ասում էին:

- 1. Խիգո (այժմ Բաշորա) գյուղը գտնվում է Թուրքիայի Արդվինի նա- հանգի խոփայի գավառում:
- 2. «Յէ մա»- հարգալից դիմելան ծորը:
- 3. Համշենակ- այսպես են անվա- նում Համշենի բարբառի խոփայի խոս- վածքն այն կողմերը:
- 4. Գիլիմոր- կրակարանի, օջախի վրա առաստաղից կախված շղթան, որից ամրացնում են կաթսան:
- 5. Գել- թուրք. արի:
- 6. Գիթ- թուրք. գնա:
- 7. Դպրոցներում օգտագործվող թուրքերեն արտահայտություն, ույու- քնիք, յաթ- պառկիք:
- 8. Բնագրում «աշխարհ ինչվէս թարնա գու», որ թարգմանվում է «այս աշխարհն ինչպես է պտտվում», նապա- տակահարմար համարեցինք թարգմա- նել «աշխարհի անցուդարձը»:
- 9. Բնագրում սէմթաքու, թուրքերեն սեմթեթի- թարային բառն է, որ նշա- նակում է բաղի դպրոց, այստեղ ունի տարրական դպրոց իմաստը:
- 10. Մինչև 1980-ական թթ. խոփայի գավառի գյուղերում էլեկտրականու- թյուն չկար:

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՉԱՄՇԵՆԱԿԱՆ» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպություն: Գրասենյակ՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8: Գեղարխոս՝ (+374+10) 20 21 26: Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին: Արտատպության կամ մեքենայով դեպքում հղումը՝ «Ձայն համշենակահին» պարտադիր է: Գրատարակվում է 2004թ. օգոստոսից:

«ДЗАЙН АМШЕНАКАН» (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации «АМШЕН» (г. Ереван), Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН. Издается с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. «HAMSHEN» Compatriotic-charitable public organization (Yerevan). «DZAYN HAMSHENAKAN». Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org